

22.303

331
F-27

05 FEB 200

Պատարակը թիւն խմբագրութեամք
էն նրգնկեանի Թիֆլիզ, Կուրնայա փող. 3.

ԳՐՈՒԵԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՄԵՐԻ ՄԽԱՅԼ

ԵԱԿՈՌԻ ԳԻՐՔԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամբագրութեան կողմէց.
Պօֆէսիօնալ միութիւն.
Բռնւորութեան օրը.
Գործարանային կօժիտէաներ.
Բանւորական կօնտրօլ.
Հաշտարար կամերաներ և միջ.
Խորդ դատարաններ.
Բանւորական քարտուղարութիւն-
ներ.
Գործարանային հակողութիւն—
ինսպեկցիա.
Կոլեկտիւ պայմանագիր.
Կանանց և երիխաների աշխա-
տանքը.
Աշխատանքի քօրսա.
Սօցիալական նովագրութիւն.

Բ Ի Ֆ Լ Ի Զ
1-V-1919

331. 881

F- 92

15 JAN 2010

22303

03.03.2013

331
F-27

ար

59

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Եթե ուզում ենք, որ հայ իրականութեան մէջ բանորութիւնը գրաւի իրաւամբ իրան պատկանող տեղը, ապա պէտք է ձեռնորդել մեր բանորական շարքերի, հայ պրօլետարիատի կազմակերպման:

Հայ իրականութիւնը հարուստ է սօցիալիստ ինտելիգենց ոյժերով. այսօր հայ ինտելիգենցիայի մեծագոյն և անշուշտ լաւագոյն մասը տոգորուած է սօցիալիստական մաքուֆ! Սակայն սօցիալիզմը՝ ինտելիգենտական հոսանք չէ, այլ պրօլետարական մտսաների ազատագրման կազմակերպ շարժում:

«Քանիորի գիրքը» փորձում է բաւարարել հայ բանորի հետաքրքրութեանն անմիջապէս:

Ներկայ տասշին պրակում (նախատեսւած է մի քանի պրակ) տալիս ենք մի շարք հոգառու յօդւածներ, ուր մեր աշխատաւոր ընկերները կարող են գտնել բանորական շարժման վերաբերեալ հարկաւոր տեղեկութիւններ: Տպարանական ծախընթիւնները մեզ ստիպել են, որքան կարելի է, սեղմել յօդւածները. բայց յոյս ունենք, որ այդ կրճատումները այնքան էլ չեն վնասել նրանց բավանդութեան:

I. ԳՐՈՅԵՍԻՕՆԱԼ ՄԻՌԻԹԻԿԻՆ

Դրոֆէսիօնալ միութիւնները՝
ոօցիալիզմի գպրոցներն են.
Ազգութ թէբէլ ...

Բանւորութեան ամբողջ ոյժը՝ նրա համերաշխութեան և կազմակերպութեան մէջ է։ Երբ բանւորը կամ բանւորութին անհատապէս է բողոքում իր շահագործման դէմ, միայնակ կովում իր իրաւացի պահանջների համար, փորձումէ տւելացնել օրավարձը կամ պահանջնել աշխատանքի ժամերը, — և առանց դժւարութեան ընկնում է կապիտալի և աշխատանքի մէջ տեղի ունեցող անհաւատար պայքարում. ապսամքը ճառային ցոյց են տալիս աշխատանոցի, գործարանի գուռը։

Բոլորովին այլ է գրութիւնը, երբ պրօլէտարիատի իրաւացի պահանջների շուրջը համախմբվում են բանւորութեան կազմակերպութիւնների հետ, քննել գործադրութային կօմիտէտի հետ առաջարկած նոր պահանջները, որովհետև հաւաքական բողոքը, գործադրութը շօշափում է նոյնչափ կապիտալիստի շահերը, որչափ և բանւորինը։

Պրօլետարիատը երկարատև հերոսուկան փորձերից յետոյ եկել է այն համոզման, որ միայն այն պահանջներն ու բողոքները կարող են դրական արդիւնք ունենած հետեւանքի յանգել, երբ նրանց ետևում զգացվում է բանւորական կազմակերպ ոյժ, երբ կանգնած են կուի պատրաստ ու կազմ պրօլէտարական շարքեր։ Անցեալ դարու կիսից սկսվում են կազմակերպել բանւորական արհեստական — պրօ-

ֆիսիօնալ միութիւններ, որի մէջ համախմբվում են գիտակից բանւորընկերներ կապիտալի և աշխատանքի մէջ տեղի ունեցող կուռմ պաշտպանելու շահագործողների անտեսական պահանջներն ու իրաւունքները։ Այսպէս օրինակ, այն բանւորները, որոնք աշխատում են մերենայական գործարանում կամ մետաղ մշակող որեէ ձեռնարկութեան մէջ՝ կազմում են մետաղ մշակող բանւորների պրօֆէսիօնալ միութիւնը. շորեղէն, գլխարկ, կօրուէտ և այլն կարող բանւորները կազմում են ասեղի աշխատաւորների միութիւն, և այնու Արգիւնաբերութեան ամեն մի ճիւղի վրայ աշխատող բանւորները համախմբվում են իրենց արհեստական պրօֆէսիօնալ միութիւնները շուրջը։

Արհեստական միութիւններ գլխաւոր նպատակն է բարելաւել իր անդամների, աւելի ճիշտը՝ մի արտադրութեան մէջ կամ մի գործարանում աշխատող բանւորների անտեսական գրութիւնը. այսպէս՝ պրօֆէսիօնալ միութիւնները պահանջում են աշխատանքի ժամերի հրամատում, օրավարձի և ընդհանրապէս աշխատավարձի աւելացում, բողոքում են գործարանների և բանւորական բնակարանների-կազմակերպութական գրութեան դէմ, բաղսգում են տէրերի և գործի վարիչների կոպիտ վերաբերմունքի դէմ, պահանջում բժշկական օգնութիւն հիւանդութեան դէպքում, մասնում են միութիւնների ծերութեան և աշխատանքի անկարողութեան օրերի մասին, և այլն, և այլն։

Արհեստական միութիւնները զեկավարում են բանւորական գործադրութիւնը, Ֆերմանիայում 1910 թ. բանւորների և տէրերի մէջ եղել է 9600 ընդհարումներ, որոնց մասնակցել են մի միլիոնից աւելի բանւոր. միութիւնները ծախսել են մօտ տասը մթիսն գումար. Այս կափւը աւելացրել է բանւորութեան աշխատավարձը շաբաթական իննը հարթւը հազարով, այսինքն տարե-

Կան մօտ քառասուն միլիօն։ Բացի այդ զգալի կերպով կրնաւել է աշխատաժամի տևողութիւնը։

Բացի տնտեսական կարից արհեստակցական միութիւնները գործում են նաև կուլտուրական ասպարիզում, զարգացնում բանւորութեան դասակարգային գիտակցութիւնը, տարածում գրագիտութիւնը, տալիս են գիրք ու լրագիր, կրթում նրա գեղարվեստական ճաշակը։ Պրոլետարիատի կուլտուրական գործունէութիւնը Սովուտական Ռուստանում այսպիսի խոշոր չափեր է ստացել, որ նա այսօր մի տասնձին ստեղծագործական ճիշդ է կազմում բանւորական շարժման մէջ և տարի ։ Տարաբար պրօֆէսիօնալ միութիւնների ձեռքից այդ գործի զեկավարութիւնն անցնում է Պրօլետական։

Արհեստակցական միութեան հետեւալ խոշոր գործը կայանում է ընկերական փոխագարձ օգնութեան մէջ։ Կարիքի և հիւանդութեան օրերին, գործադուլի և անգործութեան ժամանակ բանւորը չունի մի տեղ, ուր դիմի օգնութեան, բանւորի այրին և ուրբերը մնում են քաղցած ու ծարաւ, փողոց ընկած, որովհետև ներկայ իրաւակարգերում և երբ նա կորցնում է աշխատելու կարողութիւնը, իսկ ընտանիքը՝ աշխատող-զահող բազուկները, — քաղցի բաժին են դառնում ։ բանւորն ու նրա ժառանգները։

Բանւորների միակ յօւն ու ապահնը իրանց արհեստակցական միութիւններն են, որոնք լուրջ ուշադրութիւն են զարձնում իրանց անդամների և նրանց ընտանիքների փոխագարձ օգնութեան արկղների կազմակերպութեան վրայ։ Այդ կողմից գործը բաւական լու է զրւած Անգլիայում։ 1911 թվին այնտեղի հարիւր խոշոր միութիւններ ունեին տարեկան մուտք՝ 73 միլիօն և ծախք՝ 71 միլիօն, որից մօտ 48 միլիօն ծախսել է բանւորների և նրանց ընտանիքների օգնութեան վրայ։

Վործադուլի վրայ՝ իննը միլիօն, պրօպագանդայի ակդիտացիայի երեք ու կես միլիօն, գարչական ծախք՝ մօտ ասուը միլիօն։ Գերմանիայում պրօֆէսիօնալ միութիւնների ամբողջ եկամուտի մի երրորդը ծախսել է բանւորների փոխադարձ օգնութեան վրայ։

Լաւ գրուած ընկերական օգնութիւնը խոշոր նշանակութիւն ունի միութիւնների զարգացման համար, որովհետև նոտ գրաւում է բանւորներին արհեստակցական միութեան մէջ մտնել։

Պրօֆէսիօնալ միութեան ոլժը՝ նրա անդամների թվի մէջն է։ Ամեն մի միութիւն ձգտում է եր շուրջը համախմբների բանւորների, որքան կարելի է, ահծ թիւ, որպէսզի ճշուութեամբ արտայայտի մի գործազանի կամ արտակրութեան մէջ աշխատող պրօլետարական մասսաների արամադրութիւնը։ Եթէ արնեստակցական միութեան մէջ մտնում են մի բանի առանձին կամ մի երկու հարիւր բանւոր, երբ գործարանում կամ արտադրութեան մէջ աշխատողների թիւը հասնում է հազարների և ատանեակ հազարների, միութիւնը չի կարող ունենալ հարկաւոր հեղինակութիւն և ազգեցութիւն բանւորական կեանքի վրայ։

Ռուսաստանում — միութիւններից գուրս մնացած բանւորների թիւը շատ մեծ էր ժինչև հոկտեմբերի վեպն յեղափոխութիւնը։ 1907 թվին Ռուսաստանի բոլոր պրօֆէսիօնալ միութիւնների անդամների թիւը չէր հասնում 250,000 ի, իսկ բանւորութեան թիւը 7 սկի. էր եթէ ի նկատի առնենք որ 1907 թիւը միութիւնների ամենածաղկած տարին էր, ապա կը տեսնենք որ միութիւնների մէջ կազմակերպւած է եղել բանւորութեան միայն $3\frac{1}{2}$ տոկոսը, իսկ $96\frac{1}{2}\%$ ը ոչ...

Արտասահմանում գրութիւնը համեմատաբար աւելի բարեյաջող է։

Գերմանիայում — 1912-ին պրօֆէսիօնալ միութիւնների

մէջ հաշվում էին 3.061.000 անդամ (ամբողջ բանտորութեան 22 տոկոսը):

Անգլիայում՝ 3.010.000 անդամ ($22^{\circ}/_{\text{o}} \text{-ը}$):

Միացեալ-Նահանգներում՝ 2.283.000 ($10^{\circ}/_{\text{o}} \text{-ը}$):

Ֆրանսիայում՝ 1.029.000 ($9^{\circ}/_{\text{o}} \text{-ը}$):

Դանիայում՝ 128.000 ($30^{\circ}/_{\text{o}} \text{-ը}$):

Մեզ մօտ, Անգլիովկասում պրօֆէսիօնալ միութիւնները ունեն ընդամենը 136.000 անդամ, որոնցից մօտ 70 տոկոսը՝ 80,000-ը Բագեռում և 80 տոկոսը՝ 56.000 անդամ՝ Վրաստանի քաղաքներում։ այսպէս՝ Թիֆլիզի 37 միութիւնների մէջ՝ 37.000 անդամ, Բաթումի 17 միութիւնների մէջ՝ 3.225 անդամ։ Քութայիսի 12 միութիւնների մէջ՝ 2.500, Ճիաթուրի 2 միութեան մէջ՝ 350, Փոթի-Սուխումի միութեան մէջ՝ 300 անդամ։ Վրաստանի երկաթուղային ծառայողների միութեան մէջ՝ 11.523 անդամ։

Կերը մենք ասացինք, որ միութիւնների ոյժը անդամների թւի մէջն է. սակայն միութիւնների ոյժը բացառապես թւի մէջը չէ։ Պրօֆէսիօնալ միութիւնների շուրջը համախմբւած պրօլետարական շարքերը պիտի ունենան պրօֆէսիօնալ դաստիարակութիւն և առգործած լինին պրօլետարական գիտակցութեամբ։ Նրանք պէտք է զարգ գաղափար ունենան իրանց դասակարգային շահերի մասին, ճանաչն իրանց դասակարգային թշնամու։ Կապիտալիզմի ոյժը և կուրի ձները, ճանօթ լինեն երկրի տնտեսական դրութեան և շուկայի պայմանների հետ։

Գործատիրոջ համար դժւար չէ ջլառել պրօլետարական շարքերը, երբ պրօֆէսիօնալ միութեան անդամները կապւած չեն դասակարգային համերաշխութեան ներքին ուժեղ ողով։ Եթէ շուկայի վրայ արտադրած ապրանքների համար չկայ պահանջ և ինքը գործարանատէրը ասիթ է վնարում ազատելու բան-

արութեան մի մասից, կրնառելու աշխատող բաւոկ։ Ների թիւը, —պրօֆէսիօնալ միութեան կողմից աններելի սխուլ կը լինէր գործադուլը յայտարարել, որովհանեան գործադուլը միայն ցանկալի առնթ կը լինի կապիտալիստի համար փողոց նհտելու բանարների մի որոշ թիւ։

Նշանակութիւն ունի նոյնպէս հասարակական լայն խաւերի համակրական կամ հակակրական վերաբերմունքը դէպի բանաւորութեան պահունջները։ Գործադուլը յաճախ՝ շօշափում է ամբողջ ազգաբնակութեան շահերը (օրինակ, երկաթուղային ծառայողների, լուսաւորութեան, ջրի մատակարարութեան և նւան ձեռնարկութիւնների բանաւորների գործադուլը) և եթէ զասակարգային կուրը մզվում է ծանր մթնոլուսաւմ, ժողովրդական խաւերի հակարութեան տակ։ Կարելի է համոզւած լինել, որ գործադուլը եօկարառու և յաջող չի կարող լինել։ Երբ ժողովուրզը զգում է, որ բանաւորների պահանջը արդարացի է, նա իր բարոյական աշակցութեամբ դիւրացնում է շահագործողների պատագրութեան դատը։

Երկրի տնտեսական կեանքը կազմում է մի ամբողջութիւն։ Երբ նրա մի ծայրում տեղի ունի մի որոշ երևոյթ, առ անհական մի որեւէ ելեէջ, նա անպայման արձագանք է գտնում միւս ծայրում։

Խոյոր կապիտալիստները կամ ակցիօններական ընկերութիւնները արտադրութիւնը կազմակերպում են պետական, յաճախ նոյնիսկ համաշխարհային շուկայի մաշտարով, չափով։ Պարծարաններ հիմնվում են զանազան կենդրուններում կամ ընդհանուրակը՝ զանազան կենդրուններում հիմնված առդիւնաբերուկան ընկերութիւնները սերտ յաբարերութեան մէջ են մտնում իրար և ստեղծում կապիտալիստական մի հսկայ օյժ, որի գէմ կուել անկարազ է այս կամ այն պրօֆ. միութիւնը

միայնակ: Տէրերի համերաշխութեան՝ հակադրվում է բանւորական միութիւնների համերաշխութիւնը: Պրօֆէսիօնալ միութիւնները կազմակերպում են պետութեան ուժմաններում, երբեմն պետական սահմաններից էլ գուրս կենդրուական միութիւններ, որոնք ունեն միութիւնների վերին հոկողութիւնն ու զեկալարութիւնը: Աշխատանքի և կապիտալի մէջ տեղի ունեցող կոփը կորցնում է իր մասնակի, տեղական բնոյթը և ընդունում պետական ու համաշխարհային բնոյթ:

Արտասահմանում վաղուց արգէն բանւորութիւնը զիտակցէլ է պրօֆէսիօնալ միութիւնների ուժեղ կենդրուացման կարիքը և ստեղծել է պրօֆէսիօնալ շարժման խոշոր կենդրուական մարմիններ: Ռուսաստանում առաջին յեղափոխութեան օրերին՝ 1906—7 թ.թ. փորձեր արւեցին համառուսական պրօֆէսիօնալ կենդրուններ ստեղծելու այսպէս, օրինակ՝ տպարանային, մետաղ մշակող և մանուֆակտուրայի վրայ աշխատող բանւորների կողմից, նոյնպէս և պետական վարչութիւններում ծառայողների կողմից: Սակայն հինգէտիմը խստի հալածում էր համառուսական չափերով կազմակերպուած միութիւնները:

Այժմս, հոկեմքերեան յեղարջումից յետոյ պրօֆէսիօնալ շարժման համար բացւեց գործունէութեան լայն ասպարէզ և անկարելի է պրօֆէսիօնալ միութիւններից գուրս պատկերացնել աշխատաւորի գոյութիւնը, որովհետև Սօվէտական Ռուսաստանում պրօֆէսիօնալ միութիւնները պարաւորական են բոլորի համար:

Պրօֆէսիօնալ միութեան և քաղաքական կուսակցութեան մէջ տեղի ունի աշխատանքի բաժնում, բայց երկուսն էլ հետեւմ են միևնույն նպատակի՝ ազատագրել բանւորութիւնը կադիտալիստական շահագործումից:

Պրօֆէսիօնալ միութիւնները — բանւորութեան անտեսական կազմակերպութիւններն են, նրա անտեսական դրութեան բարելաւման համար: Քաղաքական կուսակցական կազմակերպութիւնները մզում են քաղաքական կոփը տիրող իրաւուկարգերի, բուրժուական ըէժիսի դէմ:

Պրօֆէսիօնալ միութիւնները իրանց շուրջն են խմբում բանւորական շարքերը համաձայն արաազութեան, պաշտպաններու համար տէրերի անտեսական շահագործման դէմ: Քաղաքական կուսակցութիւնները միացնում են անխմտիր բոլոր բանւորներին, որոնց մէջ կայ դասակարգային զիտակցութիւն՝ կուելու իրանց քաղաքական իրաւունքների և ոպատութեան համար, ժողովրդավարութեան և դասակարգային ազատագրման համար:

Քաղաքական կուսակցութիւնները՝ կուելով բանւորութեան քաղաքական իրաւունքների համար՝ ձըդում են ստեղծել նոր կարգեր, իրականացնել սոցիալիզմը: Արհեստակցական միութիւնները՝ կարճելով աշխատաժամի տեսզութիւնը, բարձրացնելով աշխատավարձը, զիտակցում են, որ այդ ժամանակի անտեսական բարելաւումները չեն լուծում աշխատանքի և կապիտալի մէջ բանկած մեծ կափ էութիւնը, այլ մօտեցնում են զիւրացնում են վերջնական յաղթանակի օրը:

Ռուսաստանի, Գերմանիայի, Աւ.-Հունգարիայի յեղափոխութիւնները բացեն անում պրօֆէսիօնալ միութիւնների առաջ գործունէութեան նոր հեռանկարներ. կազմակերպենք և մեր բանւորութեան շարքերը, որովհետև պրօֆէտարիատի ոյժը՝ նրա կազմակերպութեան, միութեան և համերաշխութեան մէջ է:

Ա. Ե.

II. ԲԱՆԻՈՐՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Կապիտալը շարունակ աշխատելէ, որքան կարելի է, երկարացնել բանւորի աշխատանքի տեսզութիւնը։ Վճռով որոշ օրավարձ, նա ձգտել է լուսագէմից մինչև մութ գիշեր քամել բանւորի ֆիզիքական ոյժը։ Հարկ եղած ժամանակ շահագործել նրա բազուկները գիշերային ժամերին իսկ, երբ գիշերային աշխատանքները սուլում են նրան մեծամեծ օգուտներ։

Աշխատանոցում մաշւող բանւորի ֆիզիքական քոյքայումը շատ քիչ է զբաղեցրել և հետաքրքրել տիրող դասակարգին։ Կապիտալաստական բէժիմը ստեղծել է պրօլետարիատի համար այնպիսի ծանր ու անմիթարկան վիճակ, որ շուկայի վրայ միշտ կարելի է գտնել շահագործման հերթին սպասող անգործների ամբողջ բանակ։

Երբ բանւորը հակա-առողջապահական ծանր մթնոլորտում աշխատում է օրական առաք-առաներկառ և աւելի ժամ, նա ժամանակ չունի ուրիշ բանի մասին մտածելու բացի իր ֆիզիքական ոյժերի վերականգնման։

Նրա համար գոյութիւն չունի ոչ ընտանեկան և ոչ էլ հասարակական-կուլտուրական կետնք։ Հազիւ լուսացած, նա վազում է մութ ու խոնաւ աշխատանոցը և օրւայ վերջը յոգնած ու մաշւած ընկնում անկողին։ Իր ընտանիքի հետ անդամ նա հազիւ է տեսմբ վում ճաշելու ժամերին։

Հասարակական-կուլտուրական աշխատանքը բանւորից պահանջում է ազատ ժամեր, որից նա զաւրկ է, — զղերի և եռանդի որոշ լաբւածութիւն, որին անընդունակ չէ յոգնած մարդը, ամենօրեայ երկարաժամ աշխատանքից յետոյ։ Ոչ բատրոնը և ոչ էլ գասախոսու-

թիւնը, որքան էլ հետաքրքրել լինին թէ մէկը և թէ միւսը, չեն գրաւամ նրա ուշադրութիւնը։

Գիտութիւնը ապացուցել է, որ չի կարելի առանց վառնգելու բանւորի ֆիզիքական և մտաւոր կարողութիւնները, աշխատեցնել նրան աւելի քան ութ ժամ։ Պրօլետարիատը վաղուց է որ գիտութեան պահանջը — իր պահանջն է գարձել և կոր է մղում բանւորական օրւայ կրնաւման համար։

Դեռ 1866 թւին Ժընկի Միջազգային Բանւորական Համագումարը — կոնգրեսը արգելում էր ութժամեայ աշխատանքի օր և արգելում գիշերային աշխատանցների։ Միջազգայն բանւորական համագումարի այդ իրաւացի պահանջը շուտով գարձաւ բոլոր սօցիալիստական կուսակցութիւնների պահանջ։

1889 թւին Փարիզի միջազգային Սօցիալիստական կոնգրեսը, Պերսանովի զեկուցումից յետոյ, նորից շնչաց ութժամեայ աշխատանքի նշանակութեան վրայի պահանջելով շաբաթական առնւազն 36 ժամեայ անընդհատ հանգիստ բանւորի համար։ Կոնգրեսը որոշեց ամեն տարի Մայիսի մեկին միջազգային ցոյց կազմակերպել և իր յեղափոխական գրօշակի վրայ գրել՝ ութժամեայ աշխատանքի պահանջը — իրեն բանւորական հերթական հրատապ պահանջներից մէկը։

Պարզ գաղափար կազմելու համար, թէ որքան ժամանակակից ու անհրաժեշտ է ութժամեայ բանւորական օրը պրօլետարիայ համար, աչքի անցնենք կուլտուրական ժողովուրդների բանւորական օրէնսդրութիւն այն կողմը, ուր խօսվում է աշխատանքի օրւայ անընդութեան ժամին։

Ֆրանսիա.—1902 թւի օրէնքը որոշել է 11 ժամեայ բանւորական օր։ 1904 թւին օրւայ անզութիւնը լշաւ 10 ժամի, բայց գոյութիւն ունին արգիւթիւնը ամերիկական ճիւղեր, ուր օրւայ անզութիւնը 11 և

նոյնիսկ աւելի ժամ է քաշում։ Ութ ժամեայ աշխատանքն ընդունւած է հանքային բանւորների և փառային ծառայողների համար, ծովային և զինւորական վարչութիւնների մէջ։

Գերմանիա.—1891 թւի օրէնքը չի խօսում չափահաս բանւորների օրւայ աշխատանքի տևողութեան մասին, այլ պահանջում է միայն կիրակի և տօն օրերի հանգիստ։ Միջին օրաժամը պէտք է հաշւել $10\frac{1}{2}$ ։

Անգլիա.—Անգլիական օրէնսդրութիւնը մինչև 1893 թիւը չի խօսում աղամարդ բանւորի ժամին։ Նա սահմանափակում է միայն կնոջ և երեխաների աշխատանքի օրը, 1894 թիւն զինւորական վարչութիւնը մտցնում է ութժամեայ աշխատանք։ Նրան հետեւում է ծովային վարչութիւնը։ իսկ 1895-ին փոստհեռագրական վարչութիւնը։ Հանքային բանւորների համար 1908-ի օրէնքը որոշում է $8\frac{1}{2}$ ժամւայ աշխատանք։ Ութժամեայ աշխատանք սահմանւած է ծխակոտի և նաւաշինական գործարաններում, մետաղ և կառ մշակող բանւորների համար։

Աւստրիա.—1884 թւի օրէնքով հանքային բանւորների համար որոշած է 10 ժամ, իսկ 1901-ի Բունմիայի մեծ գործադուլից յետոյ՝ իջաւ 9 ժամի։ Աշխատանքի միջին տևողութիւնը պէտք է հաշւել 11 ժամ, թէև կառ ճիշդեր (օրինակ թղթի արտագրութիւն), ուր աշխատում են 15—16 ժամ օրական։

Իտալիա.—Բանւորական օրւայ միջին տևողութիւնը 11 ժամ է։ Պիտական ծխախոտային գործարաններում աշխատում են 9 ժամ, հանքային բանւորները՝ 8-ից -10 ժամ, մեքենավարների համար սահմանւած է 9-ից $-12\frac{1}{2}$ ժամ։ Հաւիշականոցներում 14 ժամ։

Զարգերիայում.—1877 թւի օրէնքը սահմանեց 14 տարեկանից բարձր բանւորների համար—տղամարդ թէ կիս—11 ժամւայ աշխատանք, կիրակի և տօն օրերը

նախօրեակին¹ 9 ժամ, 1913 թւի օրէնքը աշխատանքի տևողութիւնը իջեցրեց 10 ժամի։

Բելգիայում.—Բանւորական օրւայ տևողութիւնը չի նախատեսւած օրէնքով։ փաստորէն աշխատանքի օրը տևում է $10\frac{1}{2}$, եռեմին նաև 11 ժամ։

Դանիայում.—Աշխատանքի միջին տևողութիւնը $9\frac{3}{4}$ ժամ է։

Նվելիայում.—Միջին աշխատաժամը՝ $10\frac{1}{2}$ ժամ է։ Նովկեֆիայում.—Միջին տևողութիւնը՝ 10 ժամ է։

Միացեալ-Նախազգեցիայում.—Գորութիւն չունի ընդհանուր օրէնք ամբողջ հանրապետութեան համար, իւրաքանչիւր նահանգ—ըստ ինքնուրոյն կերպով է ուժում բանւորական խնդիրները։ Եզել են դէպքեր, երբ բարձրագոյն նախարանը գտել է ամերիկական սահմանադրութեան և աղատ պայմանագրման գէմ աշխատանքի սահմանափակում։ 1912 թւի օրէնքով, բոլոր պետական գործարաններում և պետական պատմէրների համար աշխատող ժամնաւոր գործարաններում պարտադիր է ութժամեայ աշխատանքը։ Ութժամեայ աշխատանքը ընդունւած է նաև աղատարանական աշխատանքների համար։ Բանւորական օրւայ միջին տևողութիւնը պէտք է հաշւել $9\frac{3}{4}$ ժամ։

Ռուսաստան.—1897 թւի յուլիսի 2-ի օրէնքով երեկոյեան ժամը 9 ից մինչև առաւոտեան 6 ժամը համարվում է գիշերային ժոմ։ իսկ եթէ կայ գիշերային աշխատանք և բանւորական ճերթ (ԸՄԷԲԱ), գիշերային ժամը տևում է 10 ից մինչև առաւոտեան 4-ը։ Աշխատանքի տևողութիւնը $11\frac{1}{2}$ ժամ էր. կիրակի և տօն օրերի նախօրեակին՝ 10 ժամ։ Պուտական մեծ յեղակութիւնն նախարարութեան մէկն եղաւ ութժամեայ աշխատանքի պարտադիր լինելը բոլոր կարգի աշխատաւորների համար։ Սօվէտական Ռուսաստանից առաջ

թիւնը, գործարանի ներքին կեանքի կանոնաւորման խնդիրը իր համար այլես օտար չի համարիլ, եւ իսկապէս, բանւորը լնջպէս կարող է անսարքեր լինել թէ ինչ սանիտարական, առողջապահական կամ այլ կարգեր են տիրուժ այն գործարանում, որ նա անց է կացնուած իր ամբողջ կեանքը:

Իւրաքանչիւր գործարանի բանւորութեան գիտակից մասը կոիւ է մղել իր գործարանի ներքին բարեւման համար և այդ կառում սօցիալիստական կազմակերպութիւնները իրենց լայն աշակցութիւնն են ցոյց աւել նուանց: Այսպիսով շատ գործարաններում, ֆաբրիկաններում, հանքերում և այլ ձեռնարկութիւնների մէջ ծնունդ են առել տեղական յանձնածովովներ կամ գործարանային կօմիեւներ, որոնք ստանձնել են բանւորութեան այս կամ այն իրաւունքի ու պահանջի պաշտպանութեան գործը, գործարանատէրի հետ կապւած համաձայնութեան յօգաւածների իրականացման հսկողութիւնը և այլն: Գործարանային այդ տեղական օրգանները շարունակ ղեկավարւել են պրօֆէսիօնալ միութիւնների գիրեկտիվներով — ցուց ու մենացուց և ենթարկել նրանց:

Համաշխարհային պատերազմից առաջ գործարանային կօմիեւնների թիւը շատ նակատ էր և նրանք այնքան էլ մեծ զեր չէրն խաղում բանւորութեան կեանքում: Սակայն ներկայ իմպերիալիստական պատերազմի ընթացքում, երբ պատերազմող բուրժուական երկիրները խռուսփում ու վախում էին կապետալի և աշխատանքի կօնֆլիկտներից, ստեղծւեցին մասնաւորագէս Անդլիայում՝ գործարանային, ապօնական և ազգային արդիւնաբերական խորհուրդներ, ուր հաւասար թւով մանում են բանւորների ու կապիտալիստների ներկայացուցիչներ, լուծելու շահագործւաղթիւնների և շահագործողների միջի տարածանութիւնները:

ութամեայ օրը օրէնքով պարտադիր էր միայն հեռաւոր Աւտորալիայում:

Այսպէս բանւորը ընկերները տեսնուած են որ «քաղաքակիրթ» երկրի օրէնսդրութեան մէջ, բութուական ամենազարգացած պետութեան սահմաններուած անգամ ութամեայ բանւորական օրը ընդունելութիւն չի գտել մինչև հիմա: Համաշխարհային պրօլետարիատը այսօր էլ հրամայողաբար պահանջուած է ութամեայ աշխատանքի օր, որի նւտճման համար սահմաննել է պրօլետարական ցոյցի և բողոքի որոշ օր — մայիսի 1-ը: Սակայն այսօր, երբ աշխատանքի և կապիտալի մէջ մղւող կոիւը յեղափոխական բնոյթ է ստացել, մայիսի 1-ը գառնուած է միաժամանակ սոցիալիստական յեղափոխութեան ցոյցի և պահանջի օր:

Ա. Պ.

III. ԳՈՐԾԱՐԱՆԱՑԻՆ ԿՕՄԻՏԵՏՆԵՐ

Գործարանի, Փարոիկայի, հանքի, կամ կապիտալիստական այլ ձեռնարկութեան տէրը իր գործելակերպով շարունակ շեշտում է, թէ ինքը այդ ձեռնարկութեան կատարեալ սեփականատէրն է և ոչ ոք իրաւունք չունի խառնւելու գործարանի կամ ֆաբրիկայի ներքին կեանքին: Տիրոջ խօսքը, աւելի ճիշտ քահանաճյուղը, օրէնք պիտի լինի գործարանի մէջ աշխատանքների համար, որպէստեւ Շնա իր տան տէրն է, իսկ բանւորը՝ միայն ժամանակաւոր անցորդ գործարանում: Բանւորը մի բանի մասին կարող է խօսել ու պնդել, այն է՝ որ ժամանակին վճարւի իր աշխատանքի վարձը, ուրիշ ոչինչ:

Սակայն այն օրից ինչ բանւորը սկսել է գիտակցել իր գասակարգային շահերը և մի փոքր էլ կորցրել իր յարգանքը զէպի կապիտալիստական սեփականու-

Դ միջի այլոց այդ խորհուրդները կարող են զբաղւել հետեւալ հարցերով. Շապահովել բանուրներին այսպիսի աշխատանք և եկամուտ, որ նրանք չափազանց կապւած չեն լինին այս կամ այն ձևի աշխատանքի հետ և այս կամ այն տիրոջ հետ, ըքանուրների մասնակցութիւնը աշխատանքի պայմանների մշակման մէջ: Այսպիսով, գործարանային կօմիտէտները սկսեցին ամենուրեք հրապարակ գալ և աշքի ընկնող գեր կառարել իւրաքանչիւր ձեռնարկութեան ներքին, անդական լինդիրներում:

Ռուսաստանում մինչև մեծ յեղափոխութիւնը բանուրական կաղմակերպութիւնը խիստ հալածած էին և տէրերը, կոպիտալիսաները իրանց ազատ էին համարում ամեն ձեռնարկութեան մէջ, 1917 թից առաջ հրատարակեցին գործարանային ստարուստների (աւագների) վերաբերեալ կանոններ, սակայն շնորհիւ բանուրութեան անկազմակերպ վիճակի, այդ կանոնները հարկաւոր նշանակութիւն չունեցան: Գործարանային կօմիտէտները մեզ մօտ հրապարակ եկան յեղափոխութեան երկրորդ օրը, երբ ազատ պայմաններում կապիտալի և աշխատանքի մէջ մզւող կորուրաց կերպարանք ստացաւ:

Գործարանային կօմիտէտների գերը Ռուսաստանում շատ աւելի լայն է, քան Եւրոպայում: Մեզ մօտ նրանք պրօֆէսիօնալ շարժման սոսկ գործակից մասը չեն կազմում, ինչպէս այդ տեսնում ենք Արեմտեան Եւրոպայում. գործարանային կօմիտէտները մեզանում յաճախ մրցում են պրօֆէսիօնալ սիութիւնների հետ և միանալով, համուզումարների ու խորհրդակցութիւնների ժողովելով, իրանց կողմից գիրեկատեւներ են տալիս արհեստական միութիւններին, ուժեղ կերպով աղջում վերջինների ընթացքի և ուղղութեան վրայ:

Գործարանային կօմիտէտների այսքան աղջեցիկ գերը մեզանում պիտի բացատրել գլխաւորապէս մեր պրօֆէսիօնալ միութիւնների թոյլ զարգացմամբ: Անշուշտ, երբ վերջիններս մնաց մօտ ձեռք ըերեն հարկաւոր ոյժը, գործարանային կօմիտէտները կը կորցնեն իրանց լայն նշանակութիւնը և կը ստանան աեղական բնոյթ:

Ռուսաստանում գործարանային կօմիտէտների ներքին կազմութիւնը կանոնաւորող միակ օրէնքը՝ Ժամանակաւոր Կառավարութեան ապրիլի 22-ի ոչոշումն է, որի գլխաւոր կետերը հետեւալներն են. Կօմիտէտի ընտրութիւնը կանոնաւոր ճանաչւելու համար, անհրաժեշտ է գործարանի բանուրութեան առնապն կիսի մասնակցութիւնը. գործարանային կօմիտէտը իրաւունք ունի լինել տւած գործարանի աննորութեան ներկայացուցիչը ծառած տարածայնութիւնների ժամանակ և զբաղւել կրթական-կուլտուրական խընդիրներով. գործարանային կօմիտէտը ինչն է մշակում իր ինստրուկցիան. կօմիտէտի անդամները կարող են ազատուել աշխատանքից և շարունակել ստանալ աշխատավարձը՝ միայն գործարանի վարչութեան համաձայնութեամբ: Ինչ վերաբերում է գործարանային կօմիտէտի անդամների թվին, առվորարար զեկավարվում են Պետրօգրադի Գործարանային կօմիտէտների Կենդրունական Խորհրդի մշակած կանոնադրութեան նախագծի ըռցմունքներով:

| | | | |
|------------------|-------|--------------------------|-------------------|
| 60— | 100 | բանուր ընտրում են 3 անդ. | Գործ. Կօմիտէտամար |
| 100— | 500 | » | 5— 7 » |
| 500— | 1000 | » | 9—11 » |
| 1000— | 3000 | » | 11—13 » |
| 3000— | 6000 | » | 13—15 » |
| 6000— | 10000 | » | 15—20 » |
| 10000 ից աւելին» | | » | 20—25 » |

Սակայն գործարանային կօմիտէտի անդամների
այս թւերը պարտղիր չեն և ի իւրաքանչիւր գործա-
րանի բանւորութիւն ազատ է ընդհանուր ժողովում
որոշիլու իր գործարանային կօմիտէտի անդամների
թիւր:

Դ. Դ.

IV. ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԿՈՆՏՐՈԼ

Համաշխարհային իմպերիալիստական պատերազ-
մը կիմնովին քայլայեց պատերազմող երկիրների —
գոեթէ ամրողջ ներօպայի անտեսութիւնը: Այդ քայ-
լայումը ամենից աւելի զգալի եղաւ Ռուսաստանի
համար, որ տնտեսապէս մի շատ յետամնաց մեծու-
թիւն է:

Ռուսական մեծ յեղափոխութեան գլխաւոր պա-
հանջներից մէկն էր կազմակերպել և բարձրացնել
երկրի տնտեսական դրութիւնը: Եեղափոխութեան
փետրվարեան շրջանում կօալիցիօն կառավարութիւնը,
գլխաւորադէս մէնչէվիկները և սոցիալիստ-յեղափո-
խականները, ծրագրում էր մացնել պետական կօնյու-
ուակայն շնորհիւ բուրժուական տարրերի գիծագրու-
թեան և կառավարութեան կազմի մէջ ժանող սոցիա-
լիստների թուլութեան՝ անկարելի եղաւ արդիւնարե-
րութեան վրայ որևէ կօնտրոլ սահմանել: Բուրժուական
տարրերը իրանց համար անթոյլատրելի էին համարում
տակարական գաղտնիքի խախտումը, առեւտրա-արդիւ-
նարերական հաշէգրքերի բացումը հասարակական
որևէ մարմնի տռաջ:

Երկիրը օր-օրի վրայ շեշտող անտեսական ա-
նարխիայից հանելու համար Ռուսաստանի կօմմունիս-
տական (բոլշէվիկ) կուսակցութիւնը առաջարկեց բան-
տորական կօնյուլի ենթարկել կապիտալիստական ձեռ-
նարկութիւնները: Հոկտեմբերեան յեղաջրջումը առաջ

մզեց այդ գաղափարը և Սօվէտական իշխանութիւնը
ամեն կերպ աշխատեց այն իրականացնել:

Պարզնը մի երկու խօսրով, թէ ինչ է բանւո-
րական կօնտրոլը, զեկավարելով գլխաւորապէս Խոր-
շային կենդունական իշխանութեան դէկրէտով և
մասամբ ինստրուկցիայով:

Ժողովրդական տնտեսութեան կանոնաւորման
համար բոլոր արդիւնաբերական, առևտուական, բան-
կային, գիւղատնտեսական, հանքային, կօսպերատիւ,
տրանսպորտի և այլ ձեռնարկութիւնների վրայ, որոնք
օգտվում են վարձու աշխատանքով, հասաւավում է
բանւորական կօնյուլ, որը հսկում է ինչպէս մթերք-
ների ու հում նիւթի արտադրութեան, գնման ու ծա-
խելու, նոյնպէս և ձեռնարկութեան ֆինանսական
կողմի վրայ:

Բանւորական կօնտրոլը իրականանում է իւրա-
քանչիւր ձեռնարկութեան բանւորների և ծառայողների
բուզիանուր ժողովում ընտրած մարմիններով, իսկ եթէ
կօնտրոլը յանձնվում է Դորժարանային կօմիտէտին,
ապա նրա կազմը անզայման լրացվում է ծառայող-
ների և տեխնիքական պերսոնալի.. ներկայացուցիչնե-
րով:

Իւրաքանչիւր խոշոր քաղաքի, նահանգի կամ
արդիւնաբերական շրջանի համար հիմնվում է Բանւո-
րական կօնտրոլի Տեղական Խորհուրդ, որը լինելով
Բանւորների և Գիւղացիների Ներկայացուցիչների
Խորեղին կից մարմին, կազմւած է պրօֆէսիօնալ
միութիւնների, գործարանային կօմիտէտների և բան-
տորական կօսպերատիւնների ներկայացուցիչներից:

Նախատեսնուած է նաև Բանւորական կօնտրոլի
Համառուսական Խորհուրդ, ոսկայն մինչև Բանւորա-
կան կօնտրոլի Տեղական Խորհուրդների համագումարի
ժողովումը, որը պէտք է ընարի համառուսական արդ

մարմինը, նա ժամանակաւորապէս կազմվում է պրօ-
ֆէսիօնալ ու կօօպերատիւ կազմակերպութիւնների և
Սօվէտական իշխանութեան ներկայացուցիչներից:

Բանւորական կօնտրօլի բարձր մարմիններին կից
հաստատվում՝ են մասնագէտների (տեխնիկների, հաշ-
ւէտեսների, սատուրատիկների, տնտեսագէտների և
այլն) բննիչ Յանձնամագրովում, որոնց յանձնարարվում
է ուսումնասիրել այս կամ այն հարցերը:

Բանւորական կօնտրօլ իրականացնող մարմին-
ները իրաւունք ունեն հօկել արտադրութեան վրայ,
որոշել աշխատավարձի մինիմումը և մթերքների ար-
տադրական արժէքը: Նրանք կարող են քննել ձեռ-
նարկութեան գրագրութիւնը, որը ծածկելու համար
խստիւ պատիժ է նշանակւած:

Առևարական գաղտնիքը վերացւած է:

Զեռնացկութեան տէրերը պարտաւոր են Բանւո-
րական կօնտրօլին ներկայացնել ինչպէս ներկայ, նոյն
պէս և անցած առինների բոլոր գրեթեն ու հաշիւները:

Բանւորական կօնտրօլի որշումները պարտադիր
ոյժ ունեն ձեռնարկութիւնների տէրերի համար և կա-
րող են փոխւել միայն Բանւորական կօնտրօլի բարձր
մարմնի կողմից: Գործատէրերը կամ ձեռնարկութիւն-
ների վարչութիւնները իրաւունք ունին երեք օրւայ
ընթացքում բողոքել Բանւորական կօնտրօլի համա-
պատասխան բարձր աստիճանի առաջ:

Բանւորական կօնտրօլի Համառաւսական Խորհուր-
դը մշակում է բանւորական հոկազութեան ընդհանուր
ծրագիրներ և ինստրուկցիաներ, պարտադիր որոշում-
ներ և այլն:

Ժողովրդական տնտեսութեան Բարձրագոյն Խոր-
հուրդի (Վայուն Սօվէտ Նարօդնաց Խօզանքաւ) որո-
շումները պարտադիր են բանւորական կօնտրօլի բոլոր
մարմինների համար:

Բնաւորական կօնտրօլը պեսական ապարատ է
և պատասխանատու Սօվէտների առաջ:

Ա. Ե.

Վ. ՀԱՇՏԱՐԱՐ ԿԱՄԵՐԱՆԵՐ ԵՒ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Գործազուլը պրօլէտարիատի անտեսական շահե-
րի պաշտպանութեան վերջին միջոցն է: Սակայն նախ
քան կուի այդ միջացին դիմելը, պէտք է փորձեր անել
ծագած տարածայնութիւնները լուծել խաղաղ ճանա-
պարհով, որովհետեւ ինչպէս ցոյց է տալիս պրօֆէ-
սիօնայ միութիւնների համաշխարհային շարժումը՝ ան-
տեղի և յաճախակի կրկնող գործազումները՝ ոչ միայն
չեն նպաստում, այլ թուլացնում և կազմալուծում են
բանւորական պրօֆէսիօնալ կազմակերպութիւնները:

Տնտեսապէս զարգացած երկրներում կապիտալի
և աշխատանքի մէջ ծագող տարածայնութիւնները, երբ
նրանք կօլլեկտիվ բնայթ են կրում (կօլլեկտիւ պայմա-
նագիր), յաճախ վճռված են բանւորութեան և հապի-
տավուտների փոխադարձ համաձայնութեամբ: Բանւո-
րական կազմակերպութիւնները իրանց ներկայացուցու-
ցիչների միջոցով յարաբերութեան մէջ են մտնում
գործարանատիրոջ կամ արդիւնաբերութեան ներկա-
յացուցիչների հետ և քննում ու լուծում վիճելի խըն-
դիրները: Այդպիսի համաձայնութիւնների համար շատ
երկրներում հաստատւած են յատուկ Հաւատար կամե-
րաներ՝ առեաններ, որոնք բաղկացած են լինում բան-
ւորների և զործատէրերի հաւատար թւով ներկայա-
ցուցիչներից: Եթէ անհնարին է լինում հաշտարար
կամերայում լուծել խնդիրը, ապա նրա ըննութիւնը
անցնում է Միջնորդ դատարանին, որը կարող է լինել
մի անձն կամ բաղկացած լինել ոչ զոյտ թւով անդամ:

ներկց. վերջին դէպօւմ նախագահում է դատաւորների մէկը:

Միջնորդ դատարանի նախագահը, ինչպէս և այն դէպօւմ երբ միջնորդ դատարանը կազմում է մի անձն, նա չը պետի լինի բանորներից կամ գործառէրից. բայց թէ մէկ և թէ միւս դաստկարգը կարող են ունենալ հաւասար թւով ներկայացուցիչներ:

Հաշտարար կամերաները և միջնորդ դատարանները լինում են պարտադիր և հչ-պարտադիր, կամաւոր, նոր միջնորդութիւնը պարտադիր է պետական օրէնքով, ապա ուրեմն կողմնը պարտաւոր են անպայման ամեն սի կօլլեկտիվ կօնֆլիկտի համար գիմել միջնորդ դատարանին. այդ դէպօւմ ստհմանափակվում է գործազուլի՛ ազատ իրաւունքը, իսկ գործազուլը բանորութեան արդար պահանջների պաշտպանութեան միակ ազդեցիկ գէնքն է, որից նա չի կարող հրաժարել բուրժուական իրաւակարգների շրջանում:

Սակայն եւրոպական ընդունւած է կամտւոր միջնորդութեան ձեր և կողմերը ազատ են դիմելու հաշտարար ատեաններին կամ հրաժարւելու նրանց միջամտութիւնից:

Շուստանակաւոր կառավարութեան 1917 թ. օգոստոսի 5-ի օրէնքով հաստատվում են հաշտարար կամերաներ և միջնորդ դատարաններ համաձայն արդիւնաբերութեան միւլերի և բայօնների: Հաշտարար կամերան կազմակերպում է Աշխատանքի կօմիսարիատը, եթէ կողմերից մէկը դիմում է նրան, կօմիսարիատը կարող է իր կողմից, առանց գիրայց կօմիսարիատը կարող է ներկայացուցիչների ուղարկումի սպասելու, առաջարկել միջնորդութիւն: Հաշտարար կամերանը կազմւած են բանորների և գործառէրի ներկայացուցիչներից հաւասար թւով, որոնք նախագահ են ընտրում իրանց միջից: Առեանի որոշումը պարտադիր չէ կողմերի համար:

Աշխատանքի կօմիսարիատը կարող է կազմակերպել մայուն կամերաներ:

Անգլիայում—Հաշտարար կամերաներ և միջնորդ դատարաններ նախատեսւած են 1889 թ. օրէնքով: 1896 թւի օրէնքով Առեարի նախարարութեան մէջ հիմնվում է յատուկ մարմին, որ վարում է միջնորդութեան բոլոր խնդիրները: Որեւէ կօնֆլիկտի ժամանակ այդ մարմինը իրաւունք ունի հետևեալ միջնորդի դիմելու—ա) ըննել ընդհարման պատճառները, պատճառները, պայմաններն ու հանգամանները, բ) հրաւիրել կողմերին խաղաղ ճանապարհով լուծել վէճո, գ) կողմերի դիմումի հիման վրայ՝ կազմակերպել հաշտարար կամերա կամ նշանակել միջնորդ դատարան, դ) նախաձեռնել աշխատանքի պայմանների մասին ուսումնասիրութիւններ և բանուրների ու գործատէրերի, կամ տեղական ինքնավարութեան համաձայնութեամբ; Հիմնել հաշտարար մարմիններ ամբողջ ուայօնի կամ արդիւնաբերութեան որոշ ճիւղմիրի համար: Այդ օրէնքի համաձայն, մասնաւոր միջնորդ ատեանները ստանում են հասարակական նշանակութիւն, եթէ միայն արձանագրւած են Առեարի նախարարութեան մէջ: Պարագիր հաշտարար կամերաներ և միջնորդ դատարաններ նախատեսւած են յատուկ դէպէրերի համար, այսպէս 1909 և 1912 թ.թ. օրէնքներով բարած խային արդիւնաբերութեան համար հիմնւած են բայօննական և շրջանային յատուկ Խորհուրդներ—կազմւած բանուրների ու գործատէրերի հաւասար թւով ներկայացուցիչներից՝ նախագահաւամբ պետութեան ներկայացուցիչներից հաշտարար կամ չէզոք մարդու, —որոնք որոշում են աշխատավորձի չտփը, Նրանց որոշումները պարտադիր ոյժ ունեն:

Ֆրանսիայում—1892 թւի օրէնքը կանոնաւորում է հաշտարար դատաւորների կազմակերպած կամտւոր

միջնորդութիւնը, Հաշտարար գտառաւորը ստանալով գիծող կողմերից մէկի դիմումը, միւս կողմի հաճութեամբ նշանակում է հաշտարար կամերա, ուր իւրաքանչիւր կողմից մասնակցում են աչ աւելի քան 5. ական ներկայացուցիչ Նախադասում և զեկավարում է նիստերը ինքը—հաշտարար գտառաւորը, Եթէ այս չի յաջողվում, նա փորձում է կազմուկերպել միջնորդ դատարան, վերջինիս էլ անյաջողութեան դէպքում նա հրատարակում է բանակցութիւնների ընթացքի ժամանութիւնները, որպէս զի հասարակական կարծիքը անդեակ լինի գործի էութեան:

Գերմանիայում—հաշտարար կամերաներ կամ միջնորդ գտառարաններ կազմվում են կողմերի փոխազարձ համաձայնութեան դէպքում. նրանց որոշումները պարտադիր նշանակութիւն չունին:

Բելգիայում եւ Հօլանդիայում—միջնորդութեան գործը կազմուկերպւած է ֆրանսիական օրինակով:

Զվիցերիայում—իւրաքանչիւր կանուն իր տեղական օրէնքն ունի հաշտարար կամերաների և միջնորդ դատարանների ժամին: Ժընկի կանունում 1900 թ. օրէնքով Գետական Խորհուողը կազմուկերպում է հաշտարար առեաններ վիճող կողմերի համաձայնութեամբ. սակայն, Եթէ համաձայնութիւն չի կայանում, կազմովում է պետական միջնորդ դատարան, որի որոշումները պարտադիր են:

Նոր-Զելանդիայում—1894 թւի օրէնքով միջնորդութիւնը պարտադիր է: Ամեն մի վէճի, կօնֆիւկտի քննութիւնն ու բանումն անցնում է երկու բանւորից և երկու գործատէրից կազմւած հաշտառար կամերային, որը ընտրում է չէզոք նախադաս: Եթէ կողմերը համաձայնութեան չեն գալիս, ապա գործը քննում է միջնորդ դատարանը, որ կազմւած է երեք անձից՝ մի-մի ներկայացուցիչ բանւորների և արդիւնաբերդու-

ների կազմակերպութիւններից՝ նախագահութեամբ երրորդի—Բարձրագոյն Դատարանի անդամի: Միջնորդ գատարանի որոշումները պարագալիք են, նա կարող է լուծել աչ միայն ժամանակոր, կօնկրէտ վէճեր, ուղև ընդհանուր նշանակութիւն ունեցող վճիռներ, որոնք ոյժ ունեն միայն երեք տարւայ ընթացքում: Կօնֆիւկտների ըննութեան ժամանակ գործադուլը և լոկատուր տրգելուն են Դատարանի որոշումները չը կատարելու համար նշանակում է սինչև 4600 ր. առւգանք:

Աւստրալիայում—հաշտարար կամերաները և միջնորդ գատարանները գոյութիւն ունեն գիտաւորապէս մինիմալ տշխատավարձի մշակման համար: Նրանց որոշումները պարտադիր են:

Վ. Մ.

VI. ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ՍԵԿՐԵՏԱՐԻԱՏՆԵՐ

Պետական օրէնսդրութեան, մասնաւորապէս բանւորական օրէնսդրութեան զարգացումը վերջին տասնամետակների ընթացքում հրամայողական դարձրին իրաւաբանական ամեն տեսակի օգնութեան անհրաժեշտութիւնը բանւորական լայն խուերի համար: Այդ նպատակին ծառայում են Բանուրական հարաւորութիւնները—սեկրետարիատները:

Բանւորական քարտուղարութիւնների հայրենիքը Գերմանիան է: 1894 թւին առաջին քարտուղարութիւնը հիմնեց Նիւրբերգում, տեղական պրօֆեսիոնալ միութիւնների կենդրունական բիւրոյին կից: Նրա առեղծողն եղաւ Գերմանիայի մետաղ մշակող բանւորների յայտնի զեկավար՝ Մարտին Զէգիցը:

Փոքրիկ գործը արագ կերպով սկսեց մեծանալ. մինչդեռ առաջին տարիները քարտուղարութեան գի-

մողների թիւը 7 հազարի չեր հասնում, 1902.ին նա արձանագրում է ճիշտ 17,707 դրմում:

Նիւրեմբերգի օրինակին հետեւում են միւս քաղաքները, այնպէս որ 1912 թւին բանւորական քարտուղարութիւնների թիւը շուտով հասնում է 129 ին նրանք բոլորն էլ պահվում են պրօֆէսիջնալ միութիւնների կենցրոնական բիւրօին կից և վերջինիս միջացներով։ Երբեմն կենցրոնական բիւրօյի մէջ մըտնող պրօֆէսիօնալ միութիւնները սահմանում են որոշ տուրք քարտուղարութիւնների համար։ Ի միջի այլոց պէտք է նկատենք, որ Դերմանիայում մի հատիկ քարտուղարութիւն պահվում է (Ռիւստինգենում) քաղաքային ինքնավարութեան օժանդակութեամբ և մի ուրիշ ոժբողջապէս պահվում է պետական հաշւով (Կոռուրում):

Բանւորական քարտուղարութիւնների ընդհանուր եկամուտը 1912.ին կազմում էր 607,000 մարկ. իսկ ծախքը՝ 575,000. Բերլինում 1912 թ. հիմնած է կենդրական Բանւորական Քարտուղարութիւն։

Քարտուղարութիւնների գործունէութիւնը կայանում է հետևեալում։

ա) Տալիս են ամեն տեսակ իրաւաբանական տեղեկութիւններ ու բացատրութիւններ։

բ) Վարում են պետական ապահովագրութեան և գործարանային գատարաններում զանազան գործեր։

Ընդհանուր դատարաններում քարտուղարութիւնները դատել չեն վարում։ Իսկ եթէ ապահովագրութեան գործը տեղական մարմնից անցնում է Բերլինի Ապահովագրութեան կենցրոնական Խորհրդին, ապա գործը իր հերթին անցնում է Կերդրօնական Բանւորական Քարտուղարութեան, որ հենց սկզբից մինչեւ վերջ վարում է դատը։

Քարտուղարութիւնների $\frac{3}{4}$ -ը սպնում են կազմա-

կերպ և ոչ կազմակերպ բանւորներին անխափիր, իսկ $\frac{1}{4}$ -ը միայն սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան կամ պրօֆէսիօնալ միութեան տնօտաներին։ Վերջիններին օգնութիւնը արվում է ձրի, իսկ հչ-կազմակերպ բանւորներին շատ չնչին վարձաարութեամբ։

1912 թւին բոլոր 129 քարտուղարութիւնները տեղի են 707,000 տեղեկութիւններ ու խորհուրդներ և վարել են 6,417 ապահովագրական գատ։

Աւելարդ չի լինիլ նկատել, որ գերմանական բանւորական քարտուղարութիւններում չկան մասնագէտ իրաւաբաններ։ Բոլոր վարձով ծառալող քարտուղարները բանւորներ են, որոնք երկարամեալ փորձառութեան չնորհիւ ձեռք են բերել հարկաւոր գիտութիւն և վարժութիւն։

Բանւորական քարտուղարութիւններ գոյութիւն ունին նաև Աւստրիայում և Զվիգէրիայի շատ կանադաններում, թէև վերջիններում նրանք աւելի շատ ծառալոյում են քաղաքական և արհեստակցական պրօպագանդային, քան բանւորական իրաւաբանական օգնութեան։

1917 թւի յունիսին Գեարօգրադում գումարւած պրօֆէսիօնալ միութիւնների կօնֆերէնցիան որոշում կայացրեց Խուսաստանում ևս կազմակերպել գերմանական տիպի բանւորական քարտուղարութիւններ։

վ. Մ.

VII. ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՀԱԿՈՂՈՒԹԻՒՆ—ԻՆՍՊԵԿՑԻԱ

Բանւորական օրէնսդրութիւնը սիրալիք ընդունելութիւն չի գտել կապիտալիստ դասակարգի կողմից։ Վերջինս ամենուրեք դէմ է եղել պետութեան օրէնսդրական միջամտութեան աշխատանքի և կապիտալ մէջ ծագող կօֆլիկտների ժամանակ, գտնելով, որ բան-

ւորի և տիրոջ փոխ-յարաբերութիւնները կողմերի «ա. զոտ» համաձայնութեան խնդիր է և պիտի լուծեն առանց որևէ կողմանկի ճնշ բան։ Շնորհիւ այդ հանգամանքի աշխատանքի պաշտպանութեան համար հրատարակող օրէնքները մնում էին առանց ազդեցութեան և նոյնիսկ բուրժուական պետութիւնները անհրաժեշտ հատարեցին ստեղծել յատուկ օրդաններ արդիւաբերողներին յարգել տալու համար իրենց հրատարակած բանորական օրէնքները, Ահա այսպէս սկիզբն է առնում գործարանալին հսկողութիւնը—ինսպեկտիան։

Ի հարկէ, այս երկում, ուր բացակայում էր բանորական կազմակերպ շարժում, չկային ուժեղ արհեստակցական միութիւններ, գործարանային հսկողութիւնը լոկ անւանական էր և չէր առաջիս հարկաւոր արդիւնքը, Արդիւնաբերողների շահերը ամեննին չէին առուժում, չէին սահմանափակվում նման հսկողութեան շնորհիւ, մանուանդ որ տեղական իշխանութիւնները, որոնց օգնութեան պիտի դիմեն հարկաւոր ժամանակ գործարանային հսկիչները, այնքան էլ համակութեամբ չին վերաբերել բանորութեան։ Բայց այստեղ, ուր եղել են բանորական կազմակերպութիւններ, գործարանալին հսկողութիւնը ունեցել է անշուշտ իր գործարանալին կողմերը, որովհետև բանորական մարմինները իրանց կողմից պնդել են օրէնքների իրականացման վրայ։

Մուսաստանում գործարանային հսկողութիւնը սկզբում լոկ ստիկանական, պոլիցիական խնտատարութեան բնոյթ է կրել։ Բանորութեան բաղդը շատ քիչ է հետաքրքել ցարական բանակալ կառավարութեան։ Նրա ուշադրութեան առարկայ են եղել բանութեան խլառութեան յեղափոխական ցոյշերը, պրօլետական խլառութեան յարժումը, որի բանկումց նա միշտ եր-

կիւղ էր կրում ի հարկէ, Ռուսաստանի բանւարութիւնը շատ թերահաւատ, կասկածու վերաբերմունք է ցոյց տևել դէպի գործարանային հսկողութիւնը, որը թէն ենթարկվում էր Ֆինանսների մինհստրութեան, բայց պարտաւոր էր սերտ յարաբերութեան մէջ ինել Ոստիկանական վարչութեան—գեղարտաժենտի հետ և գործէր վերջնիս հետ համերաշխ, զեկավարւէր նրա ցուցյաւնըներով։

Գործարանային հսկողութիւնը Մուսաստանում հաստատած է 1882 թւին։ Յետոյ, 1886-ին նրա վրայ պարտաւորութիւն է գրվում նախազգուշացնել բանւորների և գործարանատերոջ մէջ ծագող ամեն յ։ տարածայնութեան մասին։ Իւրաքանչիւր տարի տպագրվում էին գործարանային հսկողութեան զեկուցումները, որոնք շատ հարուստ նիւթ էին տալիս ուստ բանւորի գործարանային կեանքի մասին։ ստկայն 1889 թւականին արդելւցին տառեկան հայեաւութեան հրատարակումը։ 1896 թւի յայտնի գործադրություն յետոյ նախարար Վիտուկն հրամայեց գործարանային հսկողութեան ամեն մի ընճագործ պրօպագանդային և գործադրություն յատնել իսկոյն նեթ ոստիկանական վարչութեան։ Խոկ 1903 թւից գործարանային հսկողութիւնը—ինսպեկցիան ամբողջապէս ենթարկվում է նահանգապետներին, որոնք իրաւունք ին ստանում բեկանել նրա որոշումները։

Գործարանային հսկողութիւնը մեզանում ունէր հետեւալ կազմութիւնը, —տեղական բարձրագոյն ժարմինը համարվում էր Գործարանային և Հանքային գործերի նահանգական տաեանը (որոշումնային հսկիչը, չորս անդամ կառավարութեան կողմից, չորս արդիւնաբերութեան ներկայացուցիչներ, Ատեանը նախագահ համարվում էր նահանգապետը։ Ատեանը

քննում էր կանոնների խախտան առթիւ արդիւնաբերովների զէմ եղած բողոքները, հետևում էր, որ օրէնքները ճիշտ հասկացւէին և մեկնաբանւէին գործանային հսկողների կազմից, հրատարակվում էր պարագիր որոշամերը: Ատեանը իրաւունք չունէր պարագիր բանւորին պայմանաժամից առաջ արձագաղելու՝ բանւորին պայմանաժամից առաջ արձակելու, աշխատավարձ կարելու, բանւորական օրւայի և աշխատավարձ կարելու, բանւորական օրւայի և աշխատավարձ ման և այլ կարևոր խնդիրներով: Գործարանային հսկիչը պարտաւոր էր քննել գործարանատիրոջ և բանւորի մէջ պայմանագրի առթիւ ցագած վէճերը, բայց նրան խստիւ արգելած էր բացարութեան մէջ մտնել բանւորների հետ:

Գործարանային հսկողութիւնը Ռուսաստանում սկզբում առածվում էր բոլոր ձեռնարկութիւնների վրայ, ուր աշխատաւմ էին 16-ից ոչ-պակաս բանւոր և գործ էր ածվում մերենայական շարժիչ ոյժ: Բանւորութեան խոշոր մասը, շնորհիւ օրէնքների անորոշութեան և տարբեր ըմբռնան ու մեկնաբանութեան, մուս էր օրէնքի պաշտպանութիւնից դուրս: Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը խորակեց ոստիկանական հսկողութեան այդ ամբողջ սիստէմը և գործարանային հսկողութեան գործը ամբողջապէս յանձնեց բանական կազմակերպութիւններին:

Անգլիայում — գործարանային հսկողութիւնը ենթարկւած է ներքին գործոց նախարարութեան, որը նշանակում է հսկիչներ և հետևում նրանց գործունութեան վրայ: Գործարանային հսկիչը իրաւունք ունի մտնել ամենորեք՝ ուր աշխատում է թէկուղ մի հատ վարձու բանւոր: Զեռնարկութեան սանիտարական հսկողութիւնը պատկանում է անգլական սանիտարական ընդհանուր կազմակերպութիւններին և գործարանային հսկիչներին միաժամանակ: Գործարանային բժիշկները

նոյնպէս մասնակցում են հսկողութեան, որոշելով պահէսիօնալ հիւանդութիւնները, անհավահասնեցի կարողութիւնը և այլն: 1912 թւին Անգլիայում կային 200 հսկիչ, որոնց թւում նաև կանալք:

Երանեալիայում — հսկողութեան ենթարկվում բոլոր ձեռնարկութիւնները, նոյնիսկ բարեգործական հաստատութիւնների և մասնաւոր ընտանեկան աշխատանոցները, ուր աշխատում են թէկուղ միեռյն ընտանիքի անդամները: Բայց հսկողութիւնից, գործարանային հսկիչները պարտաւոր են ժողովի ամեն տեղեկութիւններ աշխատանքի դրութեան մասին: Ֆրանսիան բաժանւած է 11 շոջանի՝ մի-մի շրջանային հսկիչներով, որոնց ենթարկվում են 113 նահանգական հսկիչ և 13 կի-հսկիչներ:

Գերմանիայում — գործարանային հսկողութիւն հաստատած է 1878 թւի օրենքով: 1911 թւից հսկողութիւնը տարածվում է բոլոր ձեռնարկութիւնների վրայ, նոյնիսկ այնպիսինների՝ ուր աշխատում են ընտանիքի անդամները կամ թէկուղ մի հատիկ բանւոր: Հանգային արգիւնոբերութեան հսկողութեան մէջ մասնակցում են նաև բանւորները:

Աւստրիայում — հսկողութիւնը գոյութիւն ունի 1889 թւից: 1885-ից հսկողութիւնը տարածվում է միայն այն ձեռնարկութիւնների վրայ, ուր ոչ-իրանց ընակարանում աշխատում են 20 աշխատաւորից աւելի և ուր գոյութիւն ունի աշխատանքի բաժանում: 1895 թւին հսկողութիւնը տարածվում է նաև առևտրական ձեռնարկութիւնների վրայ:

Զվիյերիայում — հսկողութեան ենթարկվում այն ձեռնարկութիւնները, ուր աշխատում են առնազն 6 բանւոր և կայ մերենայական շարժիչ ոյժ, կամ 11 բանւոր առանց շարժիչ ոյժի: Հսկողութիւնը կազմակերպւած է համաձայն 1878 թւի օրենքի, որ

նախատեսում է ընդհանուր—Փէզէդարիտիւ և տեղական—կանաօնալ հսկողութիւնը:

Դաճիքում—հսկողութիւնը տարածվում է միայն գործարանային ձերնարկութիւնների վրայ:

Նվեցիայում—1913 թւին հիմնուել է Սոցիալիստական քաղաքականութեան գործերի վարչութիւն—դէպարտամենտ, որ բազկացած է չորս բաժիններից և նրանցից մէկը կազմում է Աշխատանքի պատասխութեան և արդիւնաբերական հսկողութեան բաժինը:

Աչ մի երկրում, բացի յեղափոխական Ռուսաստանից, գործարանային հսկողութիւնը, ինչպէս և բանտորական օրէնսդրութիւնը, չեն համապատասխանում բանւոր գաստարգի շահերին. Պրօլետարիատի իրաւացի պահանջներից մէկն էլ այն է այսօր, որ գործարանային հսկիչները նշանակեն բանւորների կողմից. ընտրւեն բանւորների միջից և հսկողութիւնը տարածեի ամեն կարգի աշխատաւորների վրայ:

1889 թւի Փարիզի Միջազգայն Սոցիալիստական համագումարը այդ առթիւ հետեւեալ որոշումն է կայացրել.—«Հսկողութիւն սահմանել ըոլոր աշխատանոցների և արդիւնաբերական ձեռնարկութիւնների վրայ. այդ թւում նաև անային արդիւնաբերութեան վրայ. այդ հսկողութիւնը պէտք է յանձնել պետական գանձարանից վարձատրող հոկիչներին, որոնց առնւազն կէսը պիտի ընտրւեն բանւորների կողմից»:

Ռուսական մեծ յեղափոխութիւնը գործարանային հսկողութեան ամբողջ գործը յանձնեց պրօֆէսիոնալ ժիութիւններին. բոլոր հսկիչները ընտրվում են բանւորական կազմակերպութիւնների կողմից:

Ա. Պ.

VIII. ԿՈԼԵԿՑԻՒ-ՀԱԽԱՔԱԿԱՆ ՊԱՑՄԱՆԱԳԻՐ

Կազիտալը վախենում է հաւաքական-կոլեկտիւ ուժից. Նա ձգուած է գործ ընել իրացանչիւր բանւորի հետ առանձին, որպէս ոհետական պայմանագիրը նրա ձեռքին ծոռայում է իրեկ զօրեկ զէնք զառկարգային ճնշան, միջոց է ուղիւ թելազրելու իր բժանաւոյքը աշխատուուրին:

Այդ պատճառով, բանւորական զարժան ուսաշրնօրից պրօլետարիատը ձգած է, որ վորձու աշխատանքն ուսանակները որոշակ աչ թէ բանւորների անհատական պայմանագրով. մասնութը համաձայնութեամբ, այլ որդ համաձայնութիւնը կը կոլեկտիւ գոյն և կազմի բանւորական կազմակերպութիւնների և զրծանակրեի միաւթեան ներկայացացիչների մէջ. Հակազրիւով գործարանատէրին կու արգիւնաբերողների միութիւններին աչ թէ անեստ բանւոր, այլ բանւորական միաւթեան, պրօֆէսիոնալ կազմակերպութիւն, կազմում է իրար հակադրուած զաստկարդների ներկայացուցիչների մէջ աշխատանքի կոլեկտիւ (առիթային) պայմանագիր, որը միջոց է ուղիւ մի փոքր թեթևացնելու կազիտալիստական ճնշումը և պաշտպանելու իր շահագործուած իրաւունքները. Նա օսեղծում է ոչ խոտանեցի համար որոշ և ամուր պայմաններ, ոնկայ կազիտալիստի քանակութիւնը:

Կոլեկտիւ պայմանագիրը սովորաբար իր ներբեռում է բանւորական օրույ կընտառում և միւս կողմից՝ աշխատավարձի առելցուած. Կոլեկտիւ պայմանագիրը կաստիտակամ է պրօլետարական մասնակիւ մէջ կազմակերպչուկան և պիսցիպինոյի սովորաբիւններ և համերաշխաւթեան զգացմանեցներ:

Ռուսաստանում.—Կոլեկտիւ պայմանագիրը իր սկիզբն է տանում 1904 թւին Բագրում, ուր բանւոր

ըութիւնը սահպում է նաւթարդիւնաբերողներին կազել իր նետ կօլլեկտիւ պայմանագիր: Հետևել 1905 թւին Սարատովում, տպարանական բանասրները ստիպում են ընդունել կօլլեկտիւ պայմանագիրը ըստունվում է Մոսկվայի և Պետրովկայի տպարաններում: Սակայն ուռւական յեղափոխութեան անյաջողութիւնը կասեցրեց կօլլեկտիւ պայմանագրի գորգացումը և նոյնիսկ ձեռքբերած նւաճումները բռնի յետ խւեցին.

Միայն կօօպերատիւների ծառայողների և բանասրների աշխատանքի պայմանները երբեմն որոշվում էին կօլլեկտիւ պայմանագրով: 1917 թւի մեծ յեղափոխութիւնը նորից լայն ասպարէզ բացեց կօլլեկտիւ պայմանագրերի կիրարկման համար, և յեղափոխութեան փետրվարեան շրջանում պայմանագրերի կընքման մէջ մօտիկ մասնակցութիւն ունէր աշխատանքի մինիստրութիւնը:

Հոկտեմբերեան յեղաջրջումից յետոյ պրօֆեսիոնալ միութիւնները մշակում են իւրաքանչիւր արտադրութեան համար տարիիներ, որոնց իրականացման վրայ հոկում են բանարական կօնտրոլը:

Անգլիայում.—Կօլլեկտիւ պայմանագրի հետքեր կաքելի է հանգիպել զեռ XIX դարու սկզբներում, սակայն կօլլեկտիւ պայմանագրերը իրանց կատարեալ գորգացմանն են հունում վերջին տասնեամեակների ընթացքում, երբ պրօֆէսիօնալ միութիւնները լայն ընդունելութիւն են ստանում երկրում: 1910 թւին Անգլիայում կապւած են 1696 կօլլեկտիւ պայմանագիրը, որոնցից օգտւել են 2.400.000 բանար:

Այդ պայմանագրերը վերաբերում են որդիւնարե. բութեան հետեւալ ձիւղերին.

Հանքային 56 պայմանագ. 900.000 բան.

| | | | | |
|------------------|-----|---|---------|---|
| Տրանսպորտի | 92 | » | 500.000 | » |
| Մանուֆակտուրային | 113 | » | 460.000 | » |
| Սետաղի մշակման | 163 | » | 230.000 | » |
| Շինարարական | 803 | » | 500.000 | » |
| Շորեղէնի | 303 | » | 50.000 | » |
| Տպարանական | 79 | » | 40.000 | » |
| Այլ ձիւղերում | 87 | » | 20.000 | » |

1.696 պայմանագ. 2.400.000 բան.

Վերը բերած թւերի նշանակութիւնը ճիշտ գնահատելու համար պէտք է ի նկատի ուռնել, որ կօլլեկտիւ պայմանագիրը նշանակութիւն ունի ոչ մի ոյն կազմակերպ բանուորների համար, այլ նաև նոյն բայօնի անկազմակերպ բանուորութեան, որուց թիւը վերը չէ բերւած:

Գերմանիայում.—Կօլլեկտիւ պայմանագիրը երկան է գալիս 60-ահան թւականների վերջում: Առաջին կօլլեկտիւ պայմանագիրը կապւել է 1869—1870 թւականին տպարանական բանուորների և տպարանատերների մէջ: 1878—1890 թւականներուն, սօցիալիստների ղեծ ուղղած բաղանիկ օրէնքների գործունէութեան ընթացքում, կօլլեկտիւ պայմանագրի կիրարկումը վերսկս վում է նոր ուժով: 1905 թ. կապւած է 300 հօլլեկտիւ պայմանագիրը, որոնք շօշափել են աւելի քան կէս միլիոն բանուորների շահեր: 1911 թ. կապւած է 10.520 պայմանագիր 1.550.000 բանուորների համար. իսկ 1915 թ. արդէն 12.722 պայմանագիր 1.920.000-ի համար:

Կօլլեկտիւ պայմանագրերի գորգացմը կապիտալիստական երկրներում պատահական արկոյթ չէ: Բազմաթեայ փորձը ցուց է աւալիս, որ կապիտալիստի քանաճոյքի սոնձման և ավելանարի պայմանների կանոնարժութան լաւագոյն միջնորդից մէկն է կօլլեկ-

ամւ պայմանագիրը, ի հարկէ երբ հրապարակում
կան պրեֆեսիօնալ ուժեղ ու ազգեցիկ կազմակերպու-
թիւններ. ուստի ամեն կերպ պէտք է աղխառել կոլ-
լէկտիւ պայմանագիրն ընդոնքացնել աշխատանքի
բոլոր ճիւզերի համար:

Ս. Վ.

IX. ԿԱՆԱՆՑ ԵՒ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կազմակերպութեան անահութեան զորդացումը
արտգ կերպով անեցնում է մեջենաների գործածու-
թիւնը արդիւնաբերութեան մէջ և օր օրի վրա; Բու-
լանում մահային ոյժի նշանակութիւնը: Արտգրու-
թեան շատ ճիւզերում, ուր Փիզիքակոն ուժը յառկա-
ովէս գեր չի խաղում, վազուց է, որ շահագործում է
կանանց և երեխաների աշխատանքը: Բառներոդ գո-
րի սկզբին մի քանի միլիոն կին և երեխայ աշխա-
տում էին արդիւնաբերութեան, առետրի և տրանսպոր-
տի մէջ:

Աղացուցւած է, որ գործարունային հակա-առազ-
ջապահական և ծանր աշխատանքը քայբայիչ ազգեցու-
թիւն ունի մասնաւորապէս կնոջ և երեխայի համե-
մատաբար թոյլ օրգանիզմի վրայ և ճիւռիզութեան ու
ժահացութեան խոշոր առկոս է տալիս, նպաստում
բանւորական զասակարգի Փիզիքական այլասեռածան:
Այդ հանգամանքը ստիպել է նոյնիսկ բռնրժուական
հասարակութեան, անհրաժեշտ բանւորական ոյժ ա-
պահնվելու համար, օրէնսդրական ճանապարհով մի-
ջոցներ ձեռք առնել կանանց և երեխաների աշխա-
տանքի և առողջութեան պաշտպանութեան համար:
Սակայն մինչեւ օրս ձեռք առնաւծ միջոցները բաւա-
ր չտփով չեն պաշտպանում երեխայի և կնոջ աշ-
խատանքի իրաւունքը:

Բայց ահանքնը թէ մնչ է արել բուրժուական
օրէնսդրութիւնը այս ասպարիզում:

I. Մինիմալ (նւազագույն) հասակը առդիւնաբե-
րական աշխատանքին թուլարւած լինելու համար,
հետեւալի է:

Աւտորալիույում՝ 16 տարեկանից:

Զերշերիայում, Նոր-Զէլանդիայում, Նորվէգիա-
յում՝ 14 տարեկանից, սոկայն վեռջին պետութեան
մէջ գործարունային վերաբեկիչը՝ ինսպեկտօրը հարող
է թոյլատրել թեթև աշխատանքների և օրական վեց
ժամ միայն՝ 12 տարեկանից և առն էլ բժշկական թոյլ-
տւութեալից յատու:

Գերմանիայում և Ֆրանսիայում՝ 13 տարեկանից,
իսկ գալրոցի աւարաման վկայական նկրեայացնելու
դէպում նաև 12 տարեկանից:

Աւստրիայում, Վէնգրիայում, Անգլիայում, Բէլ-
գիայում, Շվեյցարիայում, Դանիայում և Հոլլանդիայում՝
12 տարեկանից:

Իտալիայում՝ 10 տարեկանից:

II. Բանւորական օրը սահմանափակւոծ է նե
տեեալ կերպով.

ա) 14 տարին չը լրացած երեխաների համար.

Անգլիայում՝ շտաբաթական $27\frac{1}{2}$ ժամով.

Գերմանիայում և Նորվէգիայում՝ օրական 6 ժ.

Աւստրիայում և Վէնգրիայում՝ օրական 8 ժ.

Շվեյցարիայում՝ շաբաթական 64 ժամ:

բ) 14-ից մինչև 16 տարեկանների համար:

Անգլիայում, Գերմանիայում, Վէնգրիայում, Շվե-
յցարիայում՝ 10 ժամից ոչ աւելի.

Աւստրիայում և Հոլլանդիայում՝ 11 ժամ:

Իտալիայում՝ մինչև 12 տարեկանների համար
օրական 8 ժամ, և մինչև 15 տարեկանների՝ օրական
11 ժամ:

Նոր-Զէլանդիայում՝ 14—18 տարեկանների աշ-

խոտանքը թուլատրվում է բժշկի համաձայնութեամբ
և հչ աւելի քան 48 ժամ շաբաթական:

Դանիայում՝ դպրոց չուսարտած երեխաների և
դպատանիների բանուրական օրը չի կարող 6 ժամից
աւելի տեսն:

III. Գիշերային աշխատանքներն արգելվուծ են կա-
նանց և երեխաներին:

Անգլիայում, Գիրմանիայում, Աւստրիայում, Ի-
տալիայում, Դանիայում, Շվեյցարիա:

Բելգիայում արգելված է կանանց աշխատանքը
մինչև 21 տարեկան հասակը, իսկ երեխաներին՝ մին-
չև 16 տարեկանը:

Վենգրիայում արգելված է միայն կանանց:

Գիշերային ժամ համարում է՝

Գիրմանիայում երեկոյան 8-ից մինչև 6 առաւ.

Ֆրանսիայում > 9 ից > 5 >

Անգլիայում > 10-ից > 6 >

Աւստրիայում > 6-ից > 7²/₄ >

Վենգրիայում > 10-ից > 5 >

IV. Ստորերկրեայ աշխատանքներ արգելված են.

Միացեալ-Նահանգներում՝ միանգամայն:

Ֆրանսիայում և Բելգիայում՝ միայն կանանց մին-
չև 21 տարեկան հասակը.

Աւստրիայում, Շվեյցարիա և Նորվիգիայում՝
կանանց և երեխաներին մինչև 14 տարեկանը.

Անգլիայում կանանց և երեխաներին մինչև 13
տարեկանը:

Ֆրանսիայում՝ թոյլատրվում են մինչև 16 տարե-
կան աղաներին օրտկան 8 ժամ, իսկ 16-ից 18 տարե-
կաներին 10 ժամից ոչ աւելի:

V. Բացի վերը թատեներից, կան նաև հետեւալ
սահմանափակումները.

Գիրմանիայում՝ չեն կարող ասեարական աշխա-

տանքով զբաղւել երեխաները մինչև 14 տարեկան
հասակը, արդեւնաբերութան աշխատանքն արգելվում է
տանը՝ մինչև 10 տարեկանը, իսկ 10 տարեկանից կա-
րող են աշխատել 10 ժամից ոչ աւելի:

Վենգրիայում՝ կառավարութիւնը իրաւունք ունի
արգելել առողջութեան համար ֆասուկար աշխատան-
քով զբաղւել 16 տարին չլրացած երեխաներին:

Ա. Գիշերայում՝ երեխաներին և 16 տարին չլրացած
աղջկեներին չեն թայլատրում հետեւալ աշխատանքնե-
րի՝ ապակի հալելու և ձուլելու, ազիւսներ քան զա-
կելու, աղ մշակելու, արձիճի ու սնդիկի և մի շարք
այլ արտադրութիւնների. Փազոցային տուերով ար-
գելվում է զբաղւել մինչև 18 տարեկան հասակը:

Ֆրանսիայում՝ արտադրութեան-մօտ 80, ճիւ-
զում արգելված է կանանց և երեխաների աշխատանքը
մինչև 18 տարեկան հասակը:

Բէլգիայում՝ 1889 թւի օրէնքով արգելված է
կանանց և երեխաների աշխատանքը հանգերում, մե-
քենայական շարժիչներով, նուահանգիստներում, եր-
կաթուղարին կայարաններում, ցամաքային և ջրային
տրանսպորտում, վտանգաւոր ու հակա-սողջուղահա-
կան արտադրութեան մէջ:

VI. Ծննդաբեր կանանց աշխատանքն արգելված է.

Գիրմանիայում, Ֆրանսիայում, Զվիեէրիայում՝
8 շաբաթւայ ընթացքում, որից 6 շաբաթ ծնելուց
յիտոյ.

Նորվիգիայում՝ 6 շաբաթով:

Անգլիայում, Աւստրիայում, Վենգրիայում, Բէլ-
գիայում և այլ երեխներում միայն 4 շաբաթով ծնե-
լուց յիտոյ:

Վերը բերած համառոտ տնզեկութիւնները ապա-
ցուցում են, թէ բանւրական օրէնսդրութիւնը նրան
տարբեր և անբաւարար կերպով է պաշտպանում կա-

նոնց և երեխաների կազիտալիստական շահագործումից թանը դառնուր դառնուրդի կանանց և երեխաների պաշտամութեան համար տներութեան է՝

ա) Սահմանել 8-ժամեայ աշխատանք և բոլորօվին որդելի չափանա բանւորութիւներին գիշերոյին և յաւելեալ աշխատանքներ.

բ) Ազակազել ընդհատումներին ճաշոյ ժամերի որոշ ընդհատումներ.

գ) Արգելել կանանց աշխատանքը առաջաւթեան համար մաստիկար արտադրութիւնների մէջ.

դ) Արգելել ծննդոքեր կանանց աշխատանքները ծննդուց 8 շաբաթ առաջ և ծննդուց յետոյ գարձեալ 8 շաբաթ.

ե) Թոյլատրել մայրերին կերտկրել մանկանը բանւորական ժամերի ընթացքում.

զ) Արգելել առանց բացառութիւնների, երեխաների աշխատանքները մինչև 16 տարեկան հաւակը և 16-ից մինչև 18 տարեկանների համար սահմանել միայն 6-ժամեայ աշխատանքի օր:

Սովէտական Ռուսաստանում իրականացած են բանւորութեան այդ բոլոր պահանջները:

Ա. Պ.

Խ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՐՄԱՆԵՐ

Աշխատանքի առաջարկի ու պահանջի կտնանալորման, բանւորական ձեռքերի ճիշտ արձանագրութեան ու նպատակայարմար բաշխման, նուև անդորձների օգնութեան հակողութեան—կօնտրոլի համար նիմուու են Աօխատանքի բօրաներ:

Բանւորութիւնը, իր շահերի գիտակցութեան առաջին օրից ձգտել է իր ձեռքն առնել աշխատանքի առաջարկի և պահանջի գործը, հազմուկերպել աշխատանքի շուկան, կուելու համար մի կողմից գործատէ-

բերի աշխատավարձի նւողեցման, միւս կողմից օրեյիցրեկերութիւնն*) գէմ: Թանի զեւ կազիտալիստական զարգացումը չէր յեղափախականացրել արտազրութեան պայմանները և աշխատանոցի գաները բայ էին միայն սահմանափակ թուզ արեւոտաւորների համար, պրօֆէսիոնալ միութիւնները փորձում էին ազգել աշխատանքի շահեայի վրա, ոչ թէ բանւորութեան շարքերը կազմակերպելով, այս պաշտպանելով իրանց արտօնեալ դրսութիւնը: Այս քաղաքականութեան էին հետեւմ մասնաւորապէս Անգլիայում որակւած (քվալիֆիցիրավաննի) բանւորների Ֆրէդ-իւնիօնները, որոնք իրենց արկելիչ միջոցներով (որինակ իւրաքանչիւր բանւորի վրայ սահմանաւած թիւ աշակերտ ունենալ, արգելել վարձել իրեր բանւոր՝ եթէ անկարոզ է սահմանաւած աշխատավարձը վաստակել և այլն) փորձում էին մեղմացնել աշխատանքի և կազիտալի ընդհարութերը: Ծնորիւ այն հանգամանքի, ոթ Անգլիան երկար ժամանակ հսմանակարագրային շահեայի վրայ գանցում էր բացարկի նպաստաւոր պայմաններում և գաստիկարգային ներհակաւթիւնը շահագործւազների և շահագործւազների մէջ այնքան էլ ոուր կերպարանը չունէր, թուլ էին աալիս Ֆրէդ-իւնիօններին նոյնիսկ արդիւնութերութեան այնպիսի ճիւղերում, ուր կազիտալիզմը արգէն քանդու էր էին արենաստաւորական (ցէխական) ստածելակերպը, չեզաքայնել անդործութեան աննպաստ ազդեցութիւնը կուլէկտիւ պայմանագրերով և սահմանով ընկերական փախադարձ օգնութեան կազմակերպութիւններ: Ֆրէդ-իւնիօններին կից հիմնած աշխատանքի բօրսանները միայն նիւթական օժանդակութիւն հասցնելու լրացուցիչ միջոցն էր համարվում:

Այլ էր գըութիւնը Գերմանիայում, ուր ևսկայական բայլերով զարգացող կազիտալիստական արդիւ-

*) Տես երս Յ1-ի ծանօթութիւնը:

նորերութեան դատառով, երբ արագօրէն աճում է քաղաքների ազգաբնակութեան թիւը ի վնաս գիւղական ազգաբնակութեան, միութիւնները առանձին ուշագրութիւն են դարձնում աշխատանքի շուկայի կազմակերպման վրայ: Ի նկատի պէտք է ունենալ նոյնպէս, որ քանւորական շարժումը Գերմանիայում հէնց սկզբից գտնվում էր աօցիալդէսուկատիայի ազգեցութեան ներքոյ և նէր արհետակցահանցէմական մտ սծելա” կենաց չէր կարող այնաեղ հող գտնել, Բնականաբար պրօֆէսիօնալ շարժման առաջին քայլից ևեթ, Քերլինի 1868 թ. բանւորական համագումարի զբաղմունքների շարքում առաջնակարգ տեղ է ըստում պրօֆէսիօնալ միութիւններին կից աշխատանքի առաջարկի և պահանջի կանոնաւորման միջնարկ բիւրօների կազմակերպելու խնդիրը, 1892 թւին պրօֆէսիօնալ միութիւնների Պարբէւտատի համագումարում որոշվում է միութիւնների կենդրուացման հետ միասին կենդրուացնել նաև միջնորդ բիւրօները. Այսպիսով պրօֆէսիօնալ միութիւնների միացած ոյժերով կազմակերպվում է ոչ միայն արագագութեան իւրաքանչիւր ճիւղի աշխատանքի շուկան առանձին, ալլ պետական մաշտաբով շազկապվում է նաև աշխատանքի ամբողջ շուկան:

80-ական և 90-ական թւականներին մեծ հմտութատան եւրոպական երկրներում քրանսիական Աշխատանքի բօրսաները, որոնք իրանցից ներկայացնում էրն տեղական պրօֆէսիօնալ միութիւնների՝ սինդիկատների ինքնավար միութիւն, որոնց կից գործում էր նաև աշխատանքի Միջնորդ բիւրօն Ծիրիի Միջազգային Սօցիալիստական համագումարը որոշեց աշխատանքի միջնորդութեան գործի կազմակերպման խնդրամ օրինակ ունենալ Փարիզի Աշխատանքի առաջին բօրսան կիմուած է Փարիզում 1887 թ.: Քաղաքային ինքնական գործունեութիւնը կանոնաւութել նաև աշխատանքի շուկան 1898 թ. կա-

արութիւնը յատկացրեց յատուկ շինութիւն, նիւթական միջնորդ և գործի զեկավարութիւնը յանձնեց պրօֆէսիօնալ միութիւններին՝ սինդիկատներին: Քաղաքային ինքնավարութիւնը կօնտրօլի իստատներ ունէր բօրսայի վրայ: Փարիզի օրինակին հետեւցին միւս քաղաքները. 1892-ին, երբ արգէն գոյութիւն ունէին 14 Աշխատանքի բօրսաներ, նրանցից 10-ը ժողովեցին Սէնտ կուէնում և կազմեցին Աշխատանքի Բուսաների Ֆելերացիա, որ յետագայում կտաղի կարէ էր մղում տեղական ինքնավարութիւնների գէմ պրօֆէսիօնալ միութիւնների անկախութեան համար՝ չհամենալով ենթարկել իր գործունեութիւնը մունիցիլիալիտէնների և կողութեան:

Գերմանիայում սկզբում պրօֆէսիօնալ միութիւնները ձգտում են նոյնպէս իրենց ձեռքին կենդրուացնել աշխատանքի միջնորդութեան ամրող գործը, մերժելով մասնակցել քաղաքային ինքնավարութիւնների կազմակերպած միջնորդ բիւրօների աշխատանքներին: Սակայն Ֆրանկուրտ-Մայնի-1899 թ. Պրօֆէսիօնալ Միութիւնների երրորդ Համագումարը գերադասելով միութիւններին կից միջնորդ բիւրօները՝ միաժամանակ որոշեց. — «Ենկատի ունենալով ներկայ պայմանները շատ աեղերում կօմմունալ-համայնական միջնորդ բիւրօներին ժամանկցելը ձեռնաու մի շառք արհետաների բանւորութեան համար: Սակայն բանւորների ժամակացութիւնը թուլացրելի է համարվում այն պարագայում, եթէ բանւորները անկախ են գործատէրերի աղղեցութիւնից: Վերջիններս ի նկատի ունենալով աշխատանքի շատկայի նշանակութիւնը, իրանց կողմից սկսեցին արդիւնաբերողների միութիւններին կից ստեղծել միջնորդ բիւրօներ, պնդելով թէ՝ արտագութեան կազմակերպողների գործն է կազմակերպել և կանոնաւութել նաև աշխատանքի շուկան 1898 թ. կա-

յացաւ գործառէսերի յատակ համարումարը՝ նւիրւած միջնորդ բիւրօների կողմակերպման խնդրին։ Պէտք է նկատել, որ գործառէրերի միջնորդ բիւրօները շատ տեսլի մեծ ազգեցութիւն ունեն աշխատանքի շաւկայի վրայ, ըստ պոսֆէսիօնալ միութիւններինը. Այդ բիւրօները թշնամական զիրք են բոնում նաև մաւնիցիպալիտէտների միջնորդ բիւրօների վերաբերմաքը. Նոյնիսկ այն գէպքում, երբ սրանք կազմւած են պարիտէտի սկզբունքով և գործի զեկավարութեանը հաւասար չափով ժամանակում են թէ բանարները և թէ պարտահերթը:

Չայյելով հապիտագիտական ճնշան ոյսքան ծանր պայմաններին՝ Դիրժանիայում պրօֆէսիօնալ միութիւնները յաջողութեամբ կազում են աշխատանքի շուկայի կողմակերպման համար՝ մի կողմից զարգացնելով զեկերական փախադարձ օգնութեան գործը. միւս կողմէո կոլլեկտիւ պայմանագրեցով, որոնց մեջ յաճախ յաջողվում է նախատեսնել պարտադրականութեանը երբեմն բանարարկան միջնորդ բիւրօների, երբեմն մունիցիպալ միջնորդ բիւրօների, իսկ երբեմն էլ կոլլեկտիւ պայմանագրի համաձայն ստեղծում են յատուկ պարիտայյին միջնորդ բիւրօներ։

Որբան էլ գերադասելի լինեն պրօֆէսիօնալ միութիւնների աշխատանքի բօրսուները, բայց և այնպէս բանարարկան կողմակերպութիւնները անտարբեր չզէտք է լինեն պետութեան և մաւնիցիպալիտէտների կողմակերպած միջնորդութեան բիւրօների վերաբերմաքը. որոնք զոյսւթիւն ունին զրեթէ բոլոր երկրներում—Դերժանիայում, Աւստրիայում, Անգլիայում, Աշնգրեյչայում, Նորվէգիայում, Դանիայում և ալին.—և խոշոր զեր են կատարում աշխատանքի կանոնարժում, քանի որ աշխատանք վնասազների խոշոր մասը պավում է նրանցից. եթէ պրօ-

ֆէսիօնալ միութիւնները չեն տարածում իրանց աղցեցութիւնը նաև այդ բիւրօների վրայ, ապա նրանց գառնում են տօրելիքրէկուրեան կննդրուններ։ Սակայն բանարութիւնը ամեն կերպ պէտք է կուի մտածաւը միջնորդ բիւրօների թոյլատութեան դէմ. 1911 թ. Գերմանիայի պրօֆէսիօնալ միութիւնների Դրէզդէնի համագումարը որոշեց պահանջել առեարական մասնաւոր միջնորդ բիւրօների փակումը և նրանց փախարի նումը հասարակական ձրի միջնորդութեամբ։

Թուլաստանում, ուր զոռֆէսիօնալ շարժումը սկսւել է միայն 1905 թ., միութիւնները փորձեցին ստեղծել աշխատանքի բիւրօներ զիխաւորապէս անգործ բանւորներին գլնելու համար։

Մունիցիպալիտետային աշխատանքի բօրսաներ երեան են զալիս զիխաւորապէս պատերազմի ընթացքում. մասնաւորապէս Պետրօգրադի քաղաքային Աշխատանքի բօրսուն ստեղծւած է մայրաքաղաքի բանարութեան մօտիկ գործակցութեամբ։ Ապա ստեղծվում են Աշխատանքի բօրսուներ հաստրակական զանգան կողմակերպութիւններին կից՝ զաղթականներին օգնած լինելու համար։ Սակայն աշխատանքի բօրսաները աղատ զարգանալու հնարաւորութիւն ստացան միայն յեղափոխութեան օրերին։ Պրօֆէսիօնալ Միութիւնների Համառուսական երրորդ Կոնֆէրէնցիան արտայալաւեց երկու անդամ (անգործութեան և բանարարկան քաղաքականութեան ասթիւ) յօպւա մաւնիցիպալիտետային և պետական բօրսաների. 1917 թ. օգոստոսի 19 ին Փամանակաւոր Կառավարութիւնը հրատարակեց աշխատանքի բօրսաների վերաբերեալ կանոններ, որոնցով քաղաքային և զէմանվայէտկան մնացավարութիւններին առաջարկվում էր պարիստային սկզբաններով կազմակերպել բօրսաներ այն

— 46 —

գայրերում, ուր ազգաբնակութեան թիւը 50.000-ից պակաս չէ:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը Սովէտական Թուսատանում աշխատանքի բօրսաների զեկավարութիւնը ամբողջապէս և բացառապէս յանձնեց պրօֆէ. սիօնալ միութիւններին. աշխատանքի բօրսաներ հիմնը գում են 20.000-ից ոչ-պակաս բնոկչութիւն ունեցող գայրերում, բայց կարող են բացւել նույ աւելի պակաս ազգաբնակութիւն ունեցող տեղերում, եթէ տեղական ազգաբնակութիւնը ցանկանայ:

Ա. Դ.

XI. ՍՕՑԻԱԼԸՆԿԱՆ ԱԳԱՀՈՎԱԴՐՈՒԹԻՒՆ

Բանւորի կետնը այնքան էլ թանգ չէ գնահատվում բուրժուական իրաւակարգերում. մի թանգունչ մեքենայ կապիտալիստի համար աւելի թանգարժէք է, քան տասնեակ և հարիւրաւոր բանւորների սահեղագործող ձեռքբերը, որովհետեւ շուկան լի է անգործութիւնից կիսաքաղցած գոյութիւն բարչ տւող երիտասարդ ոյժերով:

Շնորհիւ այդ պարտգույի, որ միշտ կան կրապարտկում մեծ քանակութեամբ անգործ ձեռքեր, արդիւնաբերողների գուսակարգի բնոււ հոգը չէ, երբ բանւորի հետ որեւէ զժբախտութիւն է պատահում, որ զրկում է ժամանակաւորապէս կամ ընդմիշտ աշխատելու կարողութիւնից, ինչպէս օրինակ՝ հիւանդութեան կամ ինվալիդութեան ժամանակ, և կամ բնութեան անօրինութեամբ; Ժայռութեան և ծննդաբերութեան պատճառով բանւորունին ստիպւած է ժամանակուրատապէս ընդհատել իր գործարանային կետնը: Կապիտալիստը իր նիւթական օգտի համար տուածին յարմար գէպքին փողոց է նետում հիւանդու կամ թուլացոծ բանւորին և փոխարինում նրան առողդ ու երիտասարդ բազուկներով:

Կազմակերպ բանւորական շարժումը կավում է պրօլետարիատի կեանքի ազանվութեան համար և փորձում իրականացնել սօցիալական ապահովագրութեան այնպիսի սիստեմ, որ բանւորը իրաւունք ունենայ ստանալ անգործութեան, հիւանդութեան, զբժուշութիւնը գէպքերի, ինվալիդութեան, ծերութեան, ծննդաբերութեան և մայրութեան պատճառով կորցրած աշխատավարձի փոխարէնը:

Ներկայ կապիտալիստական իրաւակարգերի թագուրութեան օրերին, բանւորութեան կտարքեալ ապահովագրութիւն զոյութիւն չունի ոչ մի երկում. միայն Սովէտական Թուսատանն է, ուր արվում են գործնական փորձեր իրականացնելու սօցիալական ապահովագրութեան պահանջները ամբողջապէս: Եւրօպական մի շարք երկրներում ապահովագրութեանը աշխատաւորի և գործատէրի մասնաւոր գործ է համարվում և ապահովագրութիւնը մասնաւոր ընոյթ է կրում. այլ տեղերում արգէն ընդունւած է պետական ապահովագրութեան սիստեմ, թէ շատ անկատար չափով. բանւորութիւնը միայն որոշ գէպքերում կարող է օգնութիւն սպասել և այն էլ շատ անշան օգնութիւն: Գետական ապահովագրութեան պահանջը միայն վերջերս է հրապարակ եկել: Սկզբում բանւորական կազմակերպութիւնները՝ պրօֆէսիօնալ միութիւնները իրանց ուժերով փորձում են կազմակերպել ընկերական փոխարած օգնութեան գործը, ինչպէս Անգլիայում Տրէդ-իննիսիանները, որոնց օրինակին չուառվ հետեւում են մի քանի մեծ ու փոքր երկիրներ՝ Գերմանիա, Աւստրիա, Շվեյցարիա և Նորվէգիա. Կամաւոր ապահովագրութեան մասնաւոր կասսաները (արկղներ) բաւական լայն ծաւալ են ստանում Ֆրանսիայում և Իտալիայում:

Սակայն այդ հակայական գործը պրօֆէսիօնալ

կազմակերպութիւնների նիւթական միջոցներից վեր էր և բանւորական շարժման ճնշման տակ պետութիւնը փորձեր է տնօւմ օրէնսդրական ճանապարհով կանոնարել և կազմակերպել սօցիալական ապահովագրութեան գործը:

Տեսնենք թէ Բնչ է արել բուրժուական օրէնսդրութիւնը աշխատաւորական մասսաների ապահովագրութեան համար:

I. Ապահովագրութիւն հիւանդութիւնների ղէմս ներկայ դէպօռմ պահանջմում է, որ բանւորը ստանայ ձրի և անհրաժեշտ բժշկական օգնութիւն, զեղեր, և ակարութեան պատճառով կորցրած աշխատավարձի փոխարէն բաւականաչափ նպաստ։ Մինչև այժմս ոչ մի երկրում գոյութիւն հունի պարտադիր ապահովագրութիւն հիւանդութիւնների գէմս։

Դերմանիայում հիւանդութիւնների ղէմս ապահովագրութիւնը մուծած է 1883-ի օրէնքով և այդ գործը ամրողապէս վարում են հիւանդանոցային կառաները, որին մասնակցում են բանւորների և արդիւարերոնների ներկայացուցիչներ։ 1911 թւի օրէնքով բանւորների իրաւունքները ստհմանափակեցին։ Դերմանիայում գոյութիւն ունեն հիւանդանոցային կառաների մի քանի արգեր—գրծարանային, գիւղական, հանքային, տեղուկան և այլն։ Ներկայումս աւելի ընդունելութիւն ունի տեղական հիւանդանոցային կառաները, որոնք օգնում են աւած բայօնի ամրազ բանւորութեան։ Նիւթական միջոցների $\frac{2}{3}$ -ը տալիս են բանւորները, իսկ $\frac{1}{3}$ -ը գրծարատէրերը։ Ապահովագրւած են մօտ 20 միլիոն մարդ, զրեթէ բոլոր աշխատավարձարները, ինչպէս օցինուկ՝ գիւղանախանական բանւորները, առն ծառաները, առեւրական և գրասենեակի ծառայողները և այլն։ Հիւանդներին բժշկ. օգնութիւն հապահում են ամբուլատօրիայում, առնը, հիւանդանո-

ցում, սահատօրիայում։ Տրվում է նպաստ աշխատավարձի կեսից մինչև երեք քառորդը մի տարւայ ընթացքում։ Հիւանդանոցային կառաների ծանրթերի 31,2% ը արւած է հիւանդներին իրեն նպաստ, 1,5% ը ծննդաբերութեան, 1,6%, թաղման, 17,8% ը՝ բժիշկների, 11,3% ը՝ գեղերի, 11,1% ը՝ հիւանդանոցային ծանրը, 0,06% ը՝ սահատօրիաների։

Աւտրիայում 1888 թւի օրէնքով ընդունւած է հիւանդութեան դէմ ապահովագրութիւնը գերմանական սիրահէմով։

Անգլիայում ապահովագրութեան այդ ձեզ մուծած է 1912 թականից և տարածվում է աշխատանքի բոլոր կատէգորիաների վրայ, այնպէս որ այդ օրէնքից օգտագործների թիւը ազգաբնակչութեան $\frac{1}{3}$ -ից անցնում է։ Ապահովագրութեան հիւթական միջոցները կողմանում են բանւորների, գրծարատէրերի և պետութեան տուբերէսից հետեւալ կերպով—բանւորները վճարում են շաբաթական և պէս (18 կ. նախըան պտաերազմի կուրսով), բանւորունիները՝ 3 պէս (13 $\frac{1}{2}$ կ.), գործարատէրերը՝ բանւորի համար 3 պէս, բանւորունին՝ $\frac{3}{2}$, պէս։ Պետութիւնը վճարում է իւրաքանչիւրի համար՝ 2 պէս։ Ապահովագրւածները իւրաւունց ունեն բժշկական օգնութեան, զեղերի, հիւանդանոցային բժշկութեան և նպաստի՝ ակարութեան ընթացքում։ Սակայն այդ իրաւունքը ձեռք են սերգում միայն կէս տարի հիւանդանոցային կառաներին անդամագրւելուց յիտոյ։ Նպաստ արվում է միայն կէս տարւայ ընթացքում շատ շնչին չտփով՝ բանւորին շաբաթական 10 շիլինգ (5 ր.), բանւորունին՝ $\frac{7}{2}$, շիլինգ (3 ր., 75 կ.), անկախ աշխատավարձի մեծութեան չտփով։ Երկու ատքի անդամակցութիւն արվում է նպաստ կէս տարւաց յիտոյ ևս, միայն աւելի պահանջողութիւն առաջանաւ կէս տարւայ ընթացքում, առնը, հիւանդանո-

վագրութեան համար Անզիայում չկան յատուկ մարմիններ Ամեն մի ապահովագրուող կարող է դիմել կամ կոպիտալիստական ապահովագրական ընկերութեան, կամ գիմօկրատական փոխազարձ օգնութեան ընկերութեան (այսպէս կոչւող՝ Բարեկամական ընկերութիւններ), կամ պրօֆէսիօնալ միութիւնների ապահովագրական կառաններին և կամ փոստային պետական ապահովագրական կաստաններին, Ալդ հիմարկութիւնները գտնվում են պետութեան հոկողութեան տակ, բայց միանգամայն ազատ են անդամագնարի չափի և ապահովագրադին ընդունելու կամ մերժելու ինսդիրներում։ Նրանք սովորաբար մերժում են ապահովագրելու ֆիլիքապէս թոլլերին, հիւանդներին, բաւական հասկաւուներին, վատ վարձամրելող բանուորներին, որոնց հետ գործ ունենալը ձեռնուու չէ ընկերութեան, և այս վերջիններս ստիպւած են դիմել փոստային պետական ապահովագրական արկղները. բայց ալսուղից են նպաստ տրվում է միայն այնքան ժամանակ, որքան որ կը բաւի նրանց անձական հաշվի գումարը իւրաքանչիւր ըրջանը՝ դրսութեան համար հիմնուած է ստենքարական կօմբքեներ, ուր ժանուու են պետութեան, տեղական ինքնապարութեան և ապահովագրական ընկերութիւնների (պրօֆէսիօնալ միութիւնների, Բարեկամական ընկերութիւնների և այլն) ներկայացուցիչներ։ Ալդ կօմիտէտները պետութեան յատկացրած սիջոցներից հիմնուու են սանատորիաներ, կազմակերպում տառջապահական դասախոսութիւններ, ապահովում և առաջարարում բրօցիւրներ, ուսումնասիրում հրանութիւնների պատճառները և այլն. նրանք հըսկում են շրջանի սանիտարական գրութեան վրայ և կարող են խոշոր տուգանքներ ու պատիժներ նշանակիլ հարկաւոր դէպրում։ Կամաւոր ապահովագրութիւն հարկաւոր դէպրում է փոքրիկ ինքնուրոյն արեստաորների թոյլատրվում է փոքրիկ ինքնուրոյն արեստաորների

համար, ինչպէս օրինակ՝ գիւղական գարբիններին, կօմիտ սրբողներին և այլն, որոնք շաբաթական վճարում են 27 կ. (կանալը 23 կ.), իսկ պետութիւնը իւ կողմից մուծում է $\frac{1}{2}$ կօմէկ։

Զվլիցերթայում ապահովագրութիւնը կազմակերպւած է կամաւորական սիստեմով. 1911 թ. յաւիսի 13-ի օրէնքով հիւանգանոյալին կասանները իրաւունք ունին ստանալ պետական նպաստ, եթէ նրանք հիմնուած են փոխադարձ օգնութեան սկզբունքի վրայ նրանք ներկայացնուու են կոռավարութեան հաշիւ թոյլատրում է մի կասանայից միւսն անցնել առանց նոր բժշկական վկայութեան ու նոր նախնական անդամավճարի և իրաւունք չունին անդամներին մերժել ապահովագրել կրօնական կամ քաղաքական համոզութերի պատճառով։ Կասանները պարտաւոր են պահել հետեւալ պայմանները՝ 1) բժշկական օգնութիւն ցուցաւալ հիւանդներին առաջին օրւանից, 2) նիւթական նպաստ տալ երրորդ օրւանից, 3) մի առրւայմէջ թոյլատրել օգնութիւն ստանալ կէս տարւայ ընթացում, 4) ապահովագրութեան կասանայից իրաւունք ունենալ օգտւել երեքամսան, անդամակցիւուց յատոյ. 5) նպաստ տալ ծննդկաններին, որոնք առնազն ինչնը ամիս անգամագրւած են արգէն։ Պետական նպաստի չափը տղամարդու համար (14 տարեկան նից) 3 Փր. 50 ս. (1 թ. 32 կ.) տարեկան, կտո՞չ 4 Փրանկ (1 թ. 50 կ.), Պետական նպաստը բարձրանուու է մինչև 2 թ. 6 կ., եթէ կասան տալիս է նպաստ ութ ամուսայ ընթացքում։ Բացի այդ ծննդկաններին արվում է 7 թ. 50 կ. նպաստ, որը կրկնապատկվում է, եթէ մայթը ինքն է ծիծ տալիս մականը։

Թրանսիայում, Իւալիայում, Գանիայում, Ֆինլանդիայում հիւանդութիւնների դէմ ապահովագրու-

թեան կամաւոր սիստեմ է ընդունւած և կազմակերպւած է գվեցերտկան սիստեմով:

II. Ապահովագրութիւն դժբաղդ դէպքերի գէմ: Հնասւած բանւորը իրաւունք ունի անեն մի գործատէրից ստանալու նպաստ կամ թոշակ աշխատանքի կարողութեան պահանջակամ իսպառ կորդնելու դէպքում: Գորատգիր ապահովագրութեան ժամանակ գործատէրերի անձնական պատասխանաւութիւնը փոխվում է կօլլէկտիւ—գաստիարգային պատասխանաւութեան և գժբաղդ դէպքերից կրած վնասները բաժնվում են: Կապիտալիստների ամբողջ դաստկարգի կամ մի ամբողջ արտակառութեան վրա:

Դեմաթիան—1884 թ. տաջինը ժայրեց պետական ապահովագրութիւն գժբաղդ դէպքերի գէմ: Ապահովագրութեան ենթակայ են արդիւնաբերութեան, գիւղատնեսութեան, անտառային անտեսութեան, շինարարութեան բանւորները, փոստի հեռագոր, տէլէֆոնի, զինւորական և ծովային վարչութիւնների ծառայողները, նաւագատիները, երկաթողային բռնորդներն և ծառայողները, անդաման ինքնավարութեան բանւորները և այլն, որոնք ստանում են տարեկան 1350 ր. ոչ աւելի: 1910 թւին ապահովագրածների թիւը հանում էր 28,4 միլիոնի, որոնցից—17 միլիոն գիւղատնեսուական բանւորները: Ապահովագրութեան ծախս քերը ամբողջապէս վճարում են գործատէրերը, որոնք և վարում են ապահովագրական տեքողջ դուծը: Արդիւնաբերութեան իւրաքանչիւր եթուդի տէրերը խմբվում են իրանց կենդրոնական արդիւնաբերտկան ընկերութեան շուրջը: Դիւղատնեսական և անտառային անտե-

նաւաստների: Ապահովագրվում է բանւորի ոչ թէ կեանքը, այլ գժբաղդ գէպքերի պատճագով աշխատանքի կարգութեան նւազումը, պակասումը, թէ ուած նպաստը երբէք չի համապատասխանում աշխատավարձի կրած կորստին: Աշխատելու կարողութիւնը բոլորովին կորցնելու դէպքում բանւորն ստանում է միայն $\frac{2}{3}$ -ը իր սովորուկան աշխատավարձի: Իսկ եթէ աշխատելու կարողութիւնը պակասում է 50 տոկոսով, ապա տրվում է աշխատավարձի $\frac{2}{3}$ -ի միայն 50 տոկոսը, այսինքն $\frac{1}{3}$ -ը և այն, 1911 թ. օրենքով՝ 10 տոկոսից պակաս աշխատավարձի կարողութիւնը կորցրածներին նպաստ չի տրվում: Միայն նրանց, որոնք չեն կարող առանց օտարի օգնութեան ապրել—ինչպէս օրինակ կորերի, անգամալուծների և այլն— տրվում է նպաստ ամբողջ աշխատավարձի չափով: Դժբաղդ գէպքերից մեռածների ժամանակները չեն կարող ստանալ թոշակ տւելիքն 60 տոկոսը, այրին ստանում է թոշակի 20 տոկոսը, մինչև 15 տարեկան երեխաները նոյնպէս 20 տոկոս: Թաղան համար միանւագ տրվում է 20 օրուայ աշխատավարձ, Դժբաղդութեան սկզբնական շրջանում, 13 շրբաթւա, ընթացքում, բանւորն տրվում է թժը կական օգնութիւն և նպաստ հիւանդանոցային կասույից, այսինքն բանւորի թեայողութիւնից: Իսկ թափէ միայն այն օրենք, որը որոշվում է աշխատանքի կորստեան չափը: Ապահովագրութիւնների գործունէութիւնը գտնվում է Միջնօրդ Դատարանների և Պետական ապահովագրական կենդրոնական Բիւրոի հոկուութեան տակ: Եւրաքանչիւր շրջանի համար կազմակերպվում է Միջնօրդ Դատարան, ուր մտնում են բանւորութեան կողմից 2, և գործատէրերից նոյնպէս 2 ներկայացուցիչներ, նախագահում է պետութեան ներկայացուցիչը: Այդ դատարանը բնուում է գժբաղդ դէպքերից վնասւուծ բանւորների և գործատէրերի մէջ

ժագած վէճերը և թօշակի չտիլ և այն: Կենդրունական Աղանովագրական Բիւրօն կազմւած է բանուրների և գործատէրերի հաւասար թւով ներկայացուցիչներէց (1910 թ. իւրաքանչիւրից 133 հոգի) և կառավարութիւնից նշանակւած նախագոհից, առջամներից, վարիչներից և այլ չինովնիկներից: Բիւրօն քննում է Միջնորդ Դատարանի վճռաների դէմ եղած բողոքները: Գերմանական բանուրութիւնը դժգոհ է թէ Միջնորդ Դատարանից և թէ Կենդրոն. Աղանով. Բիւրօնից, որովհետև թէ մէկը և թէ միւսը շարունակ պաշտպանում են տիրապետող դատակարգի շահերը: Ստահիստիկան ցոյց է տալիս, որ 1911 թ. միայն գործերի 17,4 տոկոսը վճռել է յօգուտ բանուրների. իսկ յիտագոյ տարիներում այդ տոկոսը շարունակել է պահանել: 1912 թ. աղանովագրութեան ծախքերը համեռ էին 101 օրինոն րուբլու, որից թօշակի և նպաստի 76 միլ., սկզբնական նպաստի վնասուածներին 600.000 ը., դժբաղդ գէպերի նախազգուշացման համար $1\frac{1}{8}$ միլ., վնասուածների էքսպերտիզայի համար մօտ 3 միլ. և այն: Աշխատավարձի իւրաքանչիւր 100 ը. վրայ գործատէրը ծոխում է դժբաղդ գէպերի դէմ աղանովագրելու համար միայն 1 թ. 54 կ.

Աւարիայում—գժբաղդ գէպերի դէմ աղանովագրող 1887 թ. օրէնքը շատ քչով է տուրբերվում դերմանականից. տարբերութիւնը հետեւալումն է.—չեն աղանովագրվում գեղուանահական բանուրները. աղանովագրական ընկերութիւնները կենդրուացած չեն և երկիրը բաժանւած է հօթը շըշտնի: Բանուրութիւնը մասնակցում է գործերի կառավարութեան, բայց նաև ծախքերի մէջ: Շրջանային աղանովագրական հաստառութիւնները կազմւած են 6 բանուրներան, 6 գործատէրերի և 6 պետութեան ներկայացուցիչներից:

Շախըերի 90 տոկոսը տուիս են գործատէրերը և 10-ը բանուրները: Թաշակի և նպաստի քանակը նայն է, ինչ Գերմանիայում Հիւանդանուցաւին կասպան օգնում է վնասւածին միայն առաջին 4 շաբաթը (մինչդեռ Գերմանիայում 13 շաբաթ): Աղանովագրութեան ծոխերը համում են աշխատաբարձի մօտ 2 տոկոսի:

Զիվիցեիայում—աղանովագրութիւնը պարտադիր է 1911 թի օրէնքով և առանձվում է գործարանների, հանքերի, շինարարութեան, արանսպօրտի բանուրների վրայ. չեն աղանովագրվում առեւտրսկան և ըէստրանների ծառայալները, ուրդատն, բանուրները, ոսոնք կարող են կամաւոր կերպով աղանովագրւել վճարենիլ որոշեալ տուրքի $\frac{7}{8}$ -ը, իսկ պատութիւնը լրացնում է մետած $\frac{1}{8}$ -ը: Աշխատանքի կարողաթեան կատարեալ կորստի գէպերում թոշակ կարող է ստանալ աշխատավարձի 70 տոկոսը: Հիւանդութեան ժամանակ, եթէ նա հետեւանք է դժբաղդ գէպերի, բժշկութեան ծոխերը կատարվում են գործատէրերի հաշւին և վնասւածն ստանում է նպաստ աշխատավարձի 80 տոկոսը: Աղանովագրութեան գործը վարում է «Աղջային Աղանովագրական կասպան» կազմւած 40 տնտեսից, որոնցից 12-ը պարտագրապէս աղանովագրած բանուրների ներկայացուցիչներ են և 4-ը կամաւորապէս աղանովագրանների. 16 ը գործատէրերի կողմից և 8-ը պետութեան:

Իտալիայում—1898 թ. օրէնքով պարտադիր աղանովագրութեան համար յատուկ կազմակերպութիւններ չեն ստեղծած. բանուրները կարող են աղանովագրւել պետական կամ մասնաւոր հաստառութիւններում կամ ստեղծել փոխադարձ աղանովագրութեան ընկերութիւններ:

Վէնգրիայում, Հունադիայում, Դանիայում, Նորվէգիայում, Ռումինիայում, Եվնաստանում ըն-

գունած է, մեծ կամ փոքր ծաւալով, պարտադիր առանձին գունավորութեան սիստեմը:

III. Ժերութեան եւ ինվալիդութեան ապահովագրութեան նպատակն է օգնել այն մարդկանց, որոնք մի որևէ պատճառով (բացի զժքաղդ զէպեկից) զրկվում են ամբողջապէս կամ մասամբ—աշխատելու կարողութիւնից և որոշ չափով կամ ամբողջովին կորցնում կեանքի գոյութեան միջոցները. Նրա նպատակն է նոյնպէս ապահովել որոշ հասակ բոլորած աշխատաւորի կեանքը:

Գերմանիայում—ապահովագրութեան այդ ձեւը ընդունած է 1899 թվի յուլիսի 22-ի օրէնքով. Ապահովագրվում են արդիւնաբերական, առևտնական, գիւղատնտեսական 16 տ. բարձր բերությունունում են առաջողները, որոնք ստանում են առաքեկան 900 ր. ոչ աւելի; 1912 թվին ապահովագրածների թիւը հասնում էր մօտ 18 միլ.; Թօշակ ստանալու իրաւունք ունին նրանք, որոնց—անկախ առարիթից—կորցնում են աշխատելու կարողութեան $\frac{2}{3}$ -ը և 65 տարին լրացները ինվալիդական թոշակ տրվում է ոչ միայն աշխատելու կարողութիւնն ընդիրշու կորցրածներին, այլ նաև հիւանդներին, մինչև վերջիններիս կազդուրվելը. Ապահով հիւանդանոցային կաստաների անդամներին 37-րդ շաբաթից սկսած, որովհետեւ կես տարւայ ընթացքում օգնութիւն ստացվում է հիւանդանոցային կաստաների միջոցներից: Միջոցները հայթիայթվում են բանւորների, գործառէրերի և պետութեան վճարներից: Այս վճարների չափը կազմած է աշխատավարձի չափի հետ: Սահմանած է հինգ աստիճան. առաջինը՝ երբ տարեկան աշխատավարձը մինչև 157 ր. է՝ շաբաթական վճարվում է մօտ 3 կոպէկ. Երկրորդ՝ աշխատավարձը՝ մինչև 247 ր.—շաբաթական տուրք

$\frac{4}{2}$ կոպ. և այլն. Հինգերորդ՝ երբ աշխատավարձը 517 ր. բարձր է՝ շաբաթական տուրք $\frac{8}{10}$ կ.: Գործառէրերի տուրքը հաւասար է բանւորների վճարածին: Ինվալիդական թոշակ ստանալու իրաւունք ունին նըրունք, որոնք մօտ 5 տարի (200 շաբաթ) արդէն վճարել են տուրքը. որքան շատ է վճարւած, այնքան մեծ է թոշակի չափը: Պետութիւնը իրաքարչիւր թոշակին իր կողմից աւելացնում է 23 ր. 50 կ.: Սակայն այդ օգնութիւնը ոգորմելի չափեր ունի. այսպէս՝ առաջին կարսի տարեկան թոշակն է 52 ր. 50 կ., երկրորդ կարսինը՝ 56 ր. 70 կ., հինգերորդինը 67 ր. 50 կ.: Նոյնիսկ յիսուն տարի կանոնաւոր տուրք վճարելուց յետոյ, առաջին կարսի տարեկան թոշակը հազիւ հասնում է 85 ր., իսկ հինգերորդինը՝ աժենալու վարձարված բանւորների կատեգորիան՝ տարեկան միայն 208 ր.: 1911 թ. օրէնքը մի փոքր բարձրացրեց այն ինվալիդների թոշակը, որոնք ծանրաբենած են երեխաներով: Իրաքանչիւր երեխայի համար աւելանում է թոշակի $\frac{1}{10}$ -ը: Ապահովագրական գործի կառավարութեան մասնակցում են բանւորների, գործառէրերի և պետութեան ներկայացուցիչները:

Ֆրանսիայում—ինվալիդութեան և ծերութեան ապահովագրութիւնն ընդունած է 1910 թ. ապրիլի 5-ի օրէնքով, որը տարածվում է արիւնաբերական, առևտնական, գիւղատնտեսական, պետական և հասարակական հաստատութիւնների ծառադիրների և բանւորների վոայ, նոյնպէս և ազնա պրօֆէսսիով զբազողների, եթէ նրանց առաջիկան եկամուտը 1.110 ր. չի տնցնում: Աւելի աշխատավարձը կարող են կամաւոր կերպով մասնակցել ապահովագրութեան: Ապահովագրածների թիւը հասնում է 11 միլիոնի: Առշամ է՝ անհամար աշխատավարձի չափից՝ տղամարզու համար տա-

րեկան 3 ր. 38 կ. կանոնց՝ 2 ր. 25 կ. և երեխաներին 1 ր. 69 կ.։ Նոյնքան էլ վճարում են գործատերեւում 60 տարին բոլորածները իրաւունք ունին ստանալու ծերութեան թոշակ, որի մեծութիւնը կահւած է կտարւած ներուծումների չափից. պետութիւնն իւրաքանչիւր թոշակի համար բառկացնում է տարեկան օրոց գումարը, որի մաքսիմումը հասնում է 23 ր. 50 կ. եթէ թոշակաւորը 30 տարի շառունակ կանոնաւոր վճարել է տարեկան առւարձը թոշակի մեծութիւնը չի կարող 135 ր. աւելի լինել թոշակաւորի մահւան դեպքում (60 տարին չո լրացրած գեպրում) ընտասիքն ստանում է տարեկան՝ 56 ր.՝ 112 թ. երեխաների թւին նայած. Մասնակի ինվալիդութեան գեպրում թոշակ արիում է 55 ա. սկսած. իսկ կատարեալ ինվալիդութեան ժամանակ թոշակ կարելի է ստանալ ամեն հասակում. Ապահովագրման գործը կազմակերպւած է բիբրոկմատական ձևով: Բարձրագոյն խորհրդում 28 անդամից միայն 4 ը սանւորների ներկայացուցիչներ են. շրջանակին կամ գեպարտումնենտական կամսաներում մշամանութիւնը կազմում են չինօվիսիկները և գործատէրերի ներկայացուցիչներ. բանւորներն ունին ձայների մէկ երրորդից ոչ աւելի:

Անգլիա, ում — ծերութեան ապահովագրութիւն չկայ. 1908 թ. օրէնքի համաձայն պետական գանձարանի միջոցներից թոշակ արվում է 70 տարին բոլորած անձին, եթէ սրա տարեկան եկամուտը 300 ր. բարձր չէ և վիրջին երեք տարին չի օգտւել բարեգործութիւնից: Եթէ տարեկան եկամուտը 198 ր. է, ապա արվում է թոշակ՝ շբաթական 2 ր. 25 կ., եթէ եկամուտը 207 ր. է՝ 1 ր. 80 կ. և այլն:

Դամբիայում. — Գետական թոշակաւորութեան սիստեմը գոյութիւն ունի 1891 թ. օրէնքով. Ամեն մի

քաղաքացի 60 ա. լրանալուց յետոյ, եթէ չունի գոյութեան որևէ պղբիւր և զուրկ է աշխատելու կարողութիւնից և 10 տարի ապրել է Դանիայում և վերը մին 5 տարւայ ընթացքում չի օգտւել բարեգործութիւնից: Թոշակի չափը որոշած չէ օրէնքով և վերապահւած է այդ խնդիրը տեղական ինքնավարութիւններին: Տարեկան թոշակի միջին չափը 1906 թ. հաւասար էր 60 ր. և Մախքերը ծածկվում են պետական գանձարանից և ինքնավարութեան միջոցներից:

Աւստրալիայում. — 1908 թ. յուլիսի 10 ի օրէնքով պետական թոշակի իրաւունք ունին տղամարդկան 65 ա. կանաչը՝ 60 ա. սկսած. Տարեկան թոշակի չափը՝ 246 ր., որը աստիճանաբար պակասում է այնպէս, որ թոշակաւորի տարեկան եկամուտը և պետական գանձարանից ստացած նպաստը 470 ր. չանցնի: Իրաւունք ունին թոշակի 2800 ր. աւելի կարողութիւն ունեցողները:

Նոր-Զելանդիայում 1898 թ. օրէնքի համաձայն ծերութեան թոշակի իրաւունք ունեն 65 ա. լրացած քաղաքացիները տարեկան թոշակի չափը՝ 246 ր. է: Եթէ թոշակաւորը ունի կողմանակի եկամուտներ, ապա թոշակի և եկամուի գումարը չպէտք է անցնի տարեկան 564 ր. Այդ օրէնքի հրատարակումից յետոյ 15 տարի, իւրաքանչիւր հազար ընակչի վրայ զալիս էր 14 թոշակաւոր, որոնցից 82 առկոռը ստանում էին թոշակ ամբողջ չափով:

Աւստրիայում ծերութեան և ինվալիդութեան պետական ապահովագրութիւնն ընդունւած է 1906 թ. օրէնքով՝ միայն պետական և մասնաւոր ծառայողների համար:

Իտալիայում, Բելգիայում, Սպանիայում, Պորտուգալիայում պետական ապահովագրութիւն գոյութիւն գալիքայում պետական ապահովագրութիւն գոյութիւն

չունի. պետութիւնը օժանդակութիւն է տալիս կամուռ սպահովագրական հաստատութիւններին:

IV. Ապահովագրութիւն անզործութեան դէպում. — Անզործութեան դէմ պետական ապահովագրութիւն գուռնի ոչ մի երկրում. միայն Անգլիան է, ուր մասնակի փորձեր են արւած որոշ կատէգորիաների բանւորներին ապահովագրել. Անզործ բանւորներին օգնելու ծանրութիւնը ամբողջապէս ընկնում է պրօֆէսիօնալ միութեանների վրայ, որոնք երես բիւշտի խոշորագոյն մասը ծախսում են այդ նպատակի համար:

Անգլիայում 1911 թ. օրէնքը մտցրեց անզործութեան պարտադիր ապահովագրութիւն միայն այն կատեգորիայի համար, ուր անզործութիւնը չափազանց մեծ չափեր ունի ստացած. այսպէս օրինակ՝ շինարարութեան, նաւաշինութեան. մեքենայագործութեան, զինւորական գործարանների, նաւահանգստային աշխատանքների և այլ բանւորների համար, ընդամենը 2 և կէս միլիոն մարդ: Բանւորները վճարում են օրական 10 կ., նոյնքան էլ գործատէրերը, և 5 կ. պետութիւնը. Եթէ նախօրօք վճարվում է ամբողջ տարւայ համար, ապա զեղջվում է գումարը մէկ երրորդականով. Անզործութեան դէպում նպաստ տրվում է միայն մի շաբաթից յետոյ և տարեկան միայն 15 շաբաթւայ ընթացքում: Նպաստի չափը շինարարութեան վրայ աշխատողների համար հասնում է շաբաթական 2 ր. 85 կ., իսկ միւսներին—3 ր. 25 կ.: Իրաւունք ունի նպաստ ստանալ միոյն այն դէպում, եթէ աշխատանքի բօրսան անկարող է որևէ յարմար գործառ անզործին: Ցարմար գործ չի համարվում օտքել-

թեկներութիւնը*), ինչպէս և անգործ բանւորի սովորական աշխատավարձից պակաս վարձատրւող աշխատանքը. իսկ եթէ անզործ բանւորը աշխատել է պրօֆէսիօնալ միութեան մշակած տարիֆային աշխատավարձից պակաս, ապա պարտաւոր է ընդունել տարիֆից պակաս վարձատրւող աշխատանք. Միայն եօրեւորդ շոբթանից սկսած տրվում է նպաստ այն անզործ բանւորներին, որոնք զրկւել են աեղից «վագարքի» համար. կամ ինքնակամ թողել են գործը: Եթէ անզործը մերժում է աշխատանքի բօրսայի առաջարկած աշխատանքը, ապա կառավարութեան պաշտօնան—չինովնիկը իրաւունք ունի զրկել նպաստից. Այդ վճռի դէմ կարելի է բողոքել միջնորդ դատարարանին, որ կազմւած է բանւորների և գործատէրերի հաւասար ներկայացուցիչներից և պետութեան կողմից նշանակած նախագահից: Ապահովագրութեան գործը ամբողջապէս յանձւած է աշխատանքի բօրսաներին, բայց Սուետը նախարարութիւնը կարող է թուլատրել պրօֆէսիօնալ միութիւններին իրանց անզործ ընկերներին առ օրէնքով նախատեսնաւած նպաստներ, որի երկու երրորդականը վերադարձվում է ապահովագրական ֆունդից: Անզործում էլեկտրոնայի միութիւնները ծափսում են իրանց ամբողջ բիւշտի կէսից մինչև մէկ երրորդականը անզործներին օգնելու համար:

Եկզիրայում անզործների ապահովագրութիւնը ամբողջ ապէս գտնվում է պրօֆէսիօնալ միութիւնների ձեռքին, որոնք ստանում են նպաստ բաղացային ինք-

*.) Պործադուլը քանդելու համար յաճախ գործատէրերը գործադուլ անող գիտակից ընկերների փոխարէն փորձում են ժողովել նոր բանւորներ. կապիտալի և աշխատանքի կաւում գործատէրին աջակցող այդ անգիտակից բանւորը կոչւում է շարէ յէրեկէ:

նավարութիւններից Այդ սիստեմը կոչվում է գենեական, որովհետև առաջին անգամ Գենե քաղաքում կիրառվեց: Պրօֆէսիօնալ ընկերութիւնները նպաստում են միայն իրենց անդամներին. իսկ նրանք, որոնք միութեան անդամ չեն, կարող են դիմել յատկապէս ոյլ նպատակի համար քաղաքային ինքնավարութեան կից գործող կասաներին: 1913-ին Բէլզիայում 40 ից աւելի համայնքներում ապահովագրւած էին մոտ 250.000 բանւոր, և համայնքների օժանդակութիւնը համարում էր անգործների վրայ արւած ծախսերի 40—50 տոկոսի: Գենեական սիստեմը, որ պրօֆէսիօնալ միութիւնների ինքնավարութեան և ինքնուղնութեան զարգացման դէմ չէ, մեծ համակրութիւն է վայելում բանւորական շարժերում, և Գերմանիայի, Ֆրանսիայի, Զվեցերիայի քաղաքային շատ ինքնավարութիւններ սկսեցին իրանց մօտ ևս իրականացնել:

Դամբիայում պետութիւնը օժանդակում է այն պրօֆէսիօնալ միութիւններին, որոնք օգնութեան ևն զոլիս անգործներին, վերադարձնելով ծախքերի $\frac{1}{2}$ -ը՝ 1912 թ. ապահովագրւած էին բանւորների կէսը:

Նորվեգիայում նոյն օրէնքն է, միայն այն տարբերութեամբ, որ պրօֆէսիօնալ միութիւնները պարուասուի են ապահովագրել և ոչ անդամներին. պետութիւնը տալիս է ծափքերի և սու:

Ֆրանսիայում—Նաև օրէնք ընդունած է 1905 թ. սակայն դրանից օգտվում են շատ քիչ՝ միութիւններ՝ չըցանկանալով ենթարկել պրօֆէսիօնալ միութիւնների գործունէութիւնը չինով իկան կօնտրօլի: Այդ օրէնքից օգտվում են միայն 40.000 մարդ:

Իտալիայի և Գերմանիայի շատ քաղաքներում ընդունած է գենեական սիստեմը:

V. Այրիների եւ որբերի ապահովագրութիւնը

սովորացար կապւած է ինվալիդների՝ ապահովագրութեան հետ:

Գերմանիայում նա ընդունվել է 1911 թ. ապահովագրութեան գործի բարեփոխութեան ժամանակ և տարածվում է աշխատանքի գութէրարուր կատեգորիաների վրա: Կարող են թոշակ ստանալ այն այրիները, որոնք աշխատանքի անկարող են. թոշակի մեծութիւնը աւելի քան ողործելի է—տարեկան միջին հաշով միայն 48 ր., որբերին աւելի ուշակամատաջին երեխային 24 ր., հետեւալների համար աւելացվում է 1 ր. 78 կ.: Այսպէս որ մի այրի կին վեցը, զաւակներով ստանում է տարեկան միայն 80 ր., ամսական 6 ր. 65 կ.: Միջացները հայթայթվում են հետեւալ կերպով՝ ինվալիդային տուրքի վրայ աւելանում է տարեկան 50 կ.—2 ր. 50 կ., պետութիւնը տալիս է այլու թոշակի համար՝ 23 ր., որբերի՝ 11 ր. 50 կ.:

Գրանցիայում—այրիների և որբերի ապահովագրութիւնը տարածվում է բոլոր կարգի բանւորների վրայ:

Աւստրիայում—միայն ծանր աշխատանք կատարողների վրայ:

Կրկնում ենք, միայն Սովէտական Ռուսաստանն է, որ փորձում է իրականացնել սոցիալիստական կուսակցութիւնների ծրագիրը և հակառակ իմպերիալիստական պատերազմից ժամանգած տնտեսական քայլուած դրութեան՝ կատարելապէս ապահովել բանւորի կեանքը:

ԹԱՎԱՆԴԱԿԻ ԹԻՒՆ

| | ԵՐԵՄ |
|---|------|
| I. Խմբագրութեան կողմից | 1 |
| II. Պրօֆէսիօնալ միութիւն | 2 |
| III. Բանւորութեան օրը | 10 |
| IV. Գործարանային գօտիտէտներ | 14 |
| V. Բանւորական կօնտրօլ | 18 |
| VI. Հաշտարար կամերաներ և միջնորդ գատարաններ | 21 |
| VII. Բանւորական քարտուղարութիւններ—սեկրետարիատներ | 25 |
| VIII. Գործարանային հսկողութիւն—ինսպեկցիա | 27 |
| IX. Կանանց և երեխաների աշխատանքը. | 34 |
| X. Աշխատանքի բօրսաներ. | 40 |
| XI. Սօցիալական ապահովագրութիւն | 46 |

ՀՀ Ազգային գրադարան



NL0197281

